Հավասար ընտրական իրավունքի համար ազգերը, ժողովուրդները հեղափոխություններ են արել, արյուն է հոսել: Հավասար ընտրական իրավունքը մի տուփ սիգարետ չէ, որ կարող ես մի տեղից վերցնես, հետո ծխելու հավես չունենաս, դա շպրտես մի կողմ: Դա լրջագույն իրավունք է, որը սահմանափակելու համար ծանրակշիռ հիմքեր են պետք:

Կարդացեք՝ էջ 4



Նիկոլ Փաշինյանն ասում է, որ եթե Ռուսաստանը չի ցանկանում նկատել իր գոյությունը Հայաստանի իշխանության ղեկին, ինքն էլ կոչնչացնի, կջախջախի, կնստացնի այն ուժերին, որոնք հանդես են գալիս Հայաստանի եւ Ռուսաստանի բարեկամության ու գործընկերության օգտին: Դա է ընդդիմության դեմ հարձակումների բուն պատճառը:

Կարդացեք՝ էջ 5

Ես իմ պատուհանից ամբողջ կյանքում Արարատ եմ տեսել եւ գիտեմ, որ Արարատը 1921-ից Հայաստանի տարածքում չէ, բայց ոչ ոք չի կարող ջնջել իմ միջից այդ խորհրդանիշը: Ցեղասպանությունը չես կարող բառերով ժխտել: Թուրքիան մի 100 տարի է՝ ասում է՝ չենք արել, բայց աշխարհը գիտի, որ արել է: Հազար քամիներ կգան ու կգնան:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 98 (4233), 18 հունիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Այս իշխանությունը շատ է հպարտանում ամերիկյան Firebird AI ընկերության նախագծով՝ Հրազդանում արհեստական բանականության համակարգերի տվյալների մշակման կենտրոնի (ՏՄԿ) կառուցմամբ, ինչն ուղեկցվում է գրաֆիկական պրոցեսորների մատակարարմամբ: Մեր տեղեկություններով, այս նախագիծը ոչ միայն հպարտանալու առիթ է տալիս, այլ նաեւ հատուկ դիտարկման ներքո է ուժային կառույցների կողմից: Մեզ հասած տվյալներով, ԱԱԾ-ն հաշվետվություն է ներկայացրել Անվտանգության խորհրդի գրասենյակին, որտեղ նշված է, որ 2026 թ. ապրիլից ի վեր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան պաշտպանության հարցերով ավագ խորհրդական Մեթյու Քրոուն չորս անգամ այցելել է Հրազդանում կառուցվող տվյալների մշակման կենտրոն: Առաջին անգամ նրան ուղեկցել է բարձրտեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեւորգ Մելիքսեթյանը: Հետագայում Մեթյու Քրոուն կենտրոն այցելել է ԱՄՆ դեսպանության այլ աշխատակիցների հետ, որոնք դիվանագիտական պաշտոններ չեն զբաղեցնում: Մեթյու Քրոուի վերջին երկու այցի շրջանակներում կենտրոնի տարածք է մտել նաեւ երկու բեռնատար՝ ինչ-որ սարքավորումներով, որոնք տեղադրված են եղել հատուկ հակահարվածային արկղերի մեջ: Նման վերահսկողություն սովորաբար հատուկ ծառայությունների կողմից իրականացվում է, եթե պաշտպանական օբյեկտի մասին է խոսքը:

Աեղրիի համայնքապետարանում բուռն կրքեր են շիկացել. երեկ համայնքապետ, Սամվել Բաբայանի նախկին կուսակից, համայնքապետ դառնալուց հետո ՔՊ-ական դարձած Խաչատուր Անդրեասյանն ազատել է իր տեղակալ Բագրատ Զաքարյանին, որն Արամ Սարգսյանի կուսակիցն է: Նա ընտրություններից հետո 2.5 տարի համայնքապետ աշխատեց, ապա էստաֆետը փոխանցեց Անդրեասյանին: Այս համայնքում, հիշեցնենք, ՔՊ-ն պարտվել է, որեւէ ուժ մեծամասնություն չի ստացել, ուստի պայմանավորվել էին ռոտացիոն սկզբունքով համայնքը կառավարել: Ասում են՝ վերջին տարաձայնությունների պատճառն այն է, որ Բագրատ Զաքարյանն այս ընթացքում չի համակերպվել իր գահազուրկ վիճակի հետ եւ անընդհատ խորհուրդներ է տվել գործող քաղաքապետին, վերջինս ծանր է տարել այդ միջամտությունները: Մեզ պատմեցին, որ մշտական վեճեր, կոնֆլիկտներ են եղել համայնքապետարանում, ի վերջո՝ Անդրեասյանի նյարդերը տեղի են տվել, եւ նա ազատել է ախոյանին: Մեր աղբյուրներն ասում են, որ Բագրատ Զաքարյանը մտադիր է աշնանը սպասվող ընտրություններում կրկին առաջադրվել:

Հիմա՞ ինչից է հուզված

Նիկոլ Փաշինյանի պահվածքը բոլորովին հաղթած մարդու պահվածք չէ, այլ նյարդային, սահմանային վիճակում գտնվող մարդու հիստերիա է, որի բոլոր խոսքերն ու ժեստերը վկայում են այն տագնապների ու ծայրահեղ ծանր վիճակի մասին, որում գտնվում է իշխող ուժի առաջնորդը: Նա նախընտրական փուլում իր նյարդայնությունն ու տգեղ լեքսիկոնը բացատրում էր քաղաքական պայքարով, ասում էր՝ նման անթույլատրելի խոսույթը նախընտրական քաղաքական պայքարի մաս է կազմում, ես իրենց եմ ասում, իրենք՝ ինձ: Իսկ հիմմ ինչով կբացատրի այդ խոսույթը, երբ ընտրություններն ավարտվել են, ԿԸՀ-ն իր ուզած թվերը հրապարակել է, իր սիրելի եվրոպացիներն այդ արդյունքները ճանաչել են: Ինչո՞վ է բացատրվում այս կիսախելագար վիճակը, ընդդիմությանը հայհոյելը, ապօրինի հայտարարություններ անելը, ընդդիմության առաջնորդներին սպառնալն ու ընդդիմությանն ընտրած մարդկանց վիրավորելը: Մինչ նա բղավում է, սպառնում, ընդդիմադիրների դեմ նոր քրեական գործեր հարուցել տալիս, Թուրքիայի խոշորագույն «Ազգայնական շարժում» կուսակցության ղեկավար Դեւլեթ Բահչելին աղմկահարույց հայտարարություններ է անում՝ առաջարկելով «իրերն իրենց անունով կոչել»: Ասում է. ««Զանգեզուրի միջանցքով» Կարսը միանում է Թուրքեստանի տափաստաններին: Զանգեզուրի միջանցքն իրականում թուրանական միջանցքն է, երբ այն բացվի, թյուրքական աշխարհի վերամիավորման գաղափարը շատ ավելի հստակորեն կուրվագծվի»: Հիշում եք, չէ՞, թե ինչ կատաղի պայքար էին մղում ՔՊ-ականները «Զանգեզուրի միջանցք» արտահայտության դեմ՝ փորձելով հերքել, որ նման միջանցք չկա՝ կա ԹՐԻՓՓ, որի երաշխավորը Միացյալ Նահանգների նախագահ Թրամփն է: Որքան էլ մասնագետներն ասում էին, որ անունը փոխելուց բովանդակությունը չի փոխվում, փորձում էին մարդկանց համոզել հակառակում:

Որոշ տեղեկություններով, ռուսական գազի թանկացման պարագայում Փաշինյանի ընկերն ու դաշնակիցը դարձած Իլհամ Ալիեւը խոստացել է այլընտրանքային գազ մատակարարել Հայաստանին, մենակ չթողնել կրտսեր ընկերոջը: Սխեման, ըստ մեր աղբյուրի, լինելու է այսպիսին. Ադրբեջանը գազը գնելու է Ռուսաստանից եւ համեմատաբար էժան գնով տրամադրելու է Հայաստանին, իսկ թե ինչպես է դա իրականացվելու, տեխնիկական մանրամասների վերաբերյալ մեր աղբյուրները լռում են: Միայն ենթադրում են, որ գազի գնի էժանացումը, հավանաբար, սուբսիդավորելու է Ալիեւը: Մեր աղբյուրն ասում է, որ այդ համատեքստում լարվել են նաեւ Ռուսաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները, քանի որ ՌԴ իշխանությունները նման տրանզիտ գործարքին վատ են վերաբերվում: ՀՀ իշխանությունները սիրով ռուսական ազդեցությունը կփոխարինեն թուրք-ադրբեջանականով: Նշենք, որ իշխանական եւ մերձիշխանական շրջանակները չեն էլ թաքցնում, որ գազի ներկրման հարցում այլընտրանքը կարող է լինել Ադրբեջանը:

ԵԼԱԿՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՆ ԹՈՒՐՔԱԿԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱԿ

Արդեն տեւական ժամանակ է՝ Ռուսաստանն արգելել է Հայաստանից պտուղ-բանջարեղենի ներմուծումն իր տարածք: Իշխանական շրջանակները փորձում են կրկին խաբել մարդկանց, թե ռուսական արգելքները շրջանցելու ուղիներ են գտել: Բացի այն, որ մի քանի ֆուռ մթերք է ուղարկվել տարբեր երկրներ՝ որպես փորձանմուշ, զարտուղի ճանապարհ էլ են գտել: Իշխանական միջանցքներում պարծենում են, թե հայկական ելակը տանում են Վրաստան եւ այնտեղից թուրքականի անվան տակ արտահանում Ռուսաստան: Ի դեպ, նշվում է, որ այդ այլընտրանքային ճանապարհից բոլորը չէ, որ օգտվում են: Մեզ ասացին, որ այդ ուղին աշխատում է Տիգրան Ավինյանի ընտանիքի հետ կապվող ջերմոցների ելակի արտահանման համար: Ի դեպ, Արարատյան դաշտավայրում արդեն սկսել են ծիրանի քաղը: Երեկ մեզ ասացին, որ Սուրենավան եւ Արմաշ գյուղերում, որտեղ առաջինն է հասնում հայկական ծիրանը, գյուղացիները փաստի առաջ են կանգնել՝ ամեն տարվա պես արտահանում չկա, մեկ-երկու ֆուռ է միայն գյուղ մտել, եւ բերքը գյուղացուց գնում են աննախադեպ ցածր գնով՝ 400-500 դրամով: Նախկինում նման բան երբեւէ չի եղել, առաջին բերքը մթերվել է առնվազն կրկնակի թանկ գնով: Տեղական շուկայում էլ հնարավոր չէ ամբողջ բերքն իրացնել:

ԺԱՄԱՆԱԿ

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԵՄ 14 ՀԱՅՑ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Դանիել Իոաննիսյանը, որն այս իշխանությունների սահմանադրագետն է, օրենսդիրը, քաղհասարակությունը, միտինգների քանակը հաշվողը եւ բազում այլ դերակատարումներ ունի, նախընտրական փուլում բացահայտ աջակցում էր ՔՊ-ին, «սեւացնելով» ընդդիմադիրներին: Բայց նրան հարկավոր է

անաչառության իմիտացիա ստեղծել, ուստի ընտրություններից առաջ մի տրյուկ արեց՝ դատի տվեց Աննա Հակոբյանին՝ բարեգործության արգելքը խախտելու համար: Իհարկե, դա քրեական պատիժ չի ենթադրում, երբ ընդդիմադիրներին կես խոսքի համար անմիջապես կալանավորում են՝ բարեգործության արգելքը խախտելու եւ ընտրակաշառք խոստանալու համար, Իոաննիսյանն ընդամենը վարչական դատարան էր դիմել՝ ընդդեմ Աննա Հակոբյանի, որը տուգանք է նախատեսում: Բայց Աննա Հակոբյանը խիստ վրդովվեց այդ հայցից ու իրեն ուղղված մեղադրանքներից եւ անգամ ասուլիս տվեց այդ թեմայով: Վարչական դատարանում սկսվել է վարչապետի քաղաքացիական կնոջ՝ Աննա Հակոբյանի, եւ «Անկախ դիտորդ» դաշինքի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանի միջեւ իրավական վեճի քննությունը: Իրազեկ քաղաքացիների միավորման համակարգող, «Անկախ դիտորդ» դաշինքի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը եւ իր ներկայացրած դաշինքը դիմել են ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանին 14 տարբեր դրվագներով ենթարկել վարչական պատասխանատվության: «Անկախ դիտորդ»-ը հայտարարել է, որ հիմնադրամն օրենք է խախտել: Ի պատասխան՝ Աննա Հակոբյանը հայտարարել է, որ հիմնադրամը չի խախտել Հայաստանի Հանրապետության օրենքները, եւ հանձնարարել է իր փաստաբանական թիմին՝ ձեռնարկել հակընդդեմ իրավական քայլեր՝ Դանիել Իոաննիսյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու պահանջով: Հունիսի 11-ին հայտնի դարձավ, որ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության, «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության եւ «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Անահիտ Մկրտչյանի կողմից 2026 թվականի հունիսի 2-ին վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում, որով պահանջում են «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար:

Խոսքը վերաբերում է 2026 թվականի մարտի 29-ին արձանագրված դրվագին, երբ հիմնադրամը մարտի 20-ին 29 շահառու նորաստեղծ ընտանիքների տրամադրել է 1-2 միլիոն դրամի չափով դրամաշնորհներ՝ սեփական բիզնես հիմնելու կամ զարգացնելու նպատակով: Հայցվոր կողմը պահանջում է Աննա Հակոբյանին տուգանել նվազագույն աշխատավարձի 400-ապատիկի չափով: ՀՀ վարչական դատարանի դատավոր Աղասի Դարբինյանն ընդունել է վարույթ նշված հասարակական կազմակերպությունների հայցադիմումը՝ ընդդեմ Աննա Հակոբյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի վերաբերյալ: Սակայն նախնական դատական նիստը նշանակվել է 2026 թվականի նոյեմբերի 2-ին, ժամը 12:50-ին: Այսինքն՝ այն ժամանակ, երբ հետընտրական կրքերը դադարած կլինեն, եւ դատարանը հանգիստ կջրի այս գործը:

Դանիել Իոաննիսյանը «Հրապարակի» հետ զրույցում նկատեց. «Ասեմ, որ մեր ներկայացրած մեկ հայցադիմումը, որը 14 մասից էր բաղկացած, դարձել է 14 հայցադիմում, նիստերը նշանակված են հիմնականում աշնանը: Այդ հայցերն Աննա Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին են: Ամեն մի էպիզոդն այժմ հայցերի է վերածվել»: Դանիել Իոաննիսյանը խուսափեց Աննա Հակոբյանի վերջին օրերի ակտիվությանը գնահատական տալ՝ պնդելով, որ այդ ամենը չի վերաբերում իր գործունեությանը: Իոաննիսյանը մեր այն հարցին, թե ինչպես է վերաբերվում, որ Ա. Հակոբյանը նոր կրթաշավների շարք է սկսել, պատասխանեց հարցով. «Իսկ Դուք ինչպե՞ս եք վերաբերվում հասարակությանը կրթելու փորձերին»: Դանիել Իոաննիսյանը, խոսելով նաեւ դատարանների ոչ օբյեկտիվ աշխատանքի եւ իշխանություններից ունեցած կախվածությունների մասին, նկատեց. «Մենք ակնկալում ենք, որ պետք է ենթարկեն վարչական պատասխանատվության՝ վարչական իրավախախտման համար: Բանն այն է, որ հանրապետության նախագահի կողմից ընտրությունները նշանակելու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո աֆիլացված լինելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ, «Իմ քայլը» հիմնադրամը չի դադարեցրել բարեգործական ծրագրերը»:

Ի դեպ, ողջ նախընտրական շրջանում «Իմ քայլը» ոչ մի օր չի դադարեցրել բարեգործությունը, ինչի մասին մենք գրել էինք երեկ: Սակայն հիմնադրամի տնօրենն ակտիվ քարոզարշավին չի մասնակցել՝ երեւի հույս ունենալով, որ իր պասիվությունը կդիտարկվի որպես ՔՊ-ի հետ առնչություն չունենալու ապացույց: Իսկ ընտրությունները հազիվ ավարտված՝ ամուսինը հրաման արձակեց՝ պետական միջոցներից Աննա Հակոբյանին ԱՄՆ գործուղելու մասին, որպեսզի նա մասնակցի առաջին տիկնանց համաշխարհային ժողովին:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

118 ՀԱԶԱՐ ԲՆԱԿՉԻՑ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է 103 ՀԱԶԱՐՆ ԸՆՏՐՈՂ ԼԻՆԵԼ

2025թ. նոյեմբերի 19-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մարզի բնակչության թվի մասին տեղեկատվական հարցում եմ արել: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզի բնակչությունը կազմում է 143.108 մարդ»: Այդ թիվը խիստ ուռճացված է եւ ոչ արժանահավատ, քանի որ Տավուշի մարզի ձեւավորման ժամանակ՝ 1995-1996 թվականներին, Տավուշի մարզի բնակչությունը եղել է շուրջ 132 հազար, Տավուշից արտերկիր արտագաղթի, Երեւան, Հայաստանի այլ վայրեր տեղափոխությունների, բնակչության ցածր ծնելիության, մահվան դեպքերի մեծ թվի հետեւանքով անցած 30 տարում Տավուշի մարզի բնակչությունը որոշակի չափով նվազել է: Կասկածելով այս տվյալներին՝ 2025թ. դեկտեմբերի 1-ին մարզի բնակչության վերաբերյալ նոր հարցում արեցի Տավուշի մարզպետին:

Ի պատասխան, մարզպետի աշխատակազմից հայտնեցին. «ՀՀ Տավուշի մարզի բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է պետական լիազոր մարմինը, մարզում մշտական առկա եւ հաշվառված բնակչության թվաքանակի վերաբերյալ առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմին»: Բնակչության թվաքանակի հարցով պետական լիազոր մարմինը ՀՀ վիճակագրական կոմիտեն է: Այդ կոմիտեի տվյալներով, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ, նախնական տվյալներով՝ Տավուշի մարզի մշտական բնակչությունը 118 հազար է, 2026 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա բնակչությունը 103 հազար 600 է: Տավուշի մարզպետը որտեղի՞ց է վերցրել մարզի բնակչության 143 հազար 108 թիվը: Իսկ ինչքա՞ն է համապետական ընտրություններում Տավուշի մարզի ընտրողների թիվը: 2018 թ. դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրություններում Տավուշի մարզն ընդգրկող թիվ 13 ընտրատարածքի ընդհանուր թվով 96 ընտրական տեղամասերի ընտրացուցակներում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 108 հազար 773: Դրանցից քվեարկությանը մասնակցել է 57 հազար 698-ը: 2021թ. հունիսի 20-ի ԱԺ ընտրություններում Տավուշի մարզի ընտրացուցակներում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը եղել է 109 հազար 692, դրանցից քվեարկությանը մասնակցել է 58 հազար 677-ը: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքի տվյալների՝ 2026 թ.հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրություններին Տավուշի մարզի ընտրողների թիվը եղել է 103 հազար 467, որից քվեարկությանը մասնակցել է 65 հազար 557-ը:

Տավուշի մարզպետի աշխատակազմի տրամադրած պաշտոնական տվյալներից տեղեկացել եմ, որ 2025-2026 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը եղել է 15 հազար 468: 12-րդ դասարանցիներից քչերն են հունիսի 7-ի դրությամբ եղել 18 տարեկան եւ ընդգրկված եղել ընտրողների ցուցակներում: Տավուշի մարզի նախադպրոցական տարիքի երեխաների թիվը շուրջ 9 հազար է: Ինչպե՞ս է ստացվել, որ մարզի 118 հազար բնակչից 103 հազար 467-ն ընտրող է, երբ այդ 118 հազարից ավելի քան 15 հազարը դպրոցական է, իսկ 9 հազարն էլ նախադպրոցական տարիքի: Գուցե այդ պատճառով է մարզպետ Հ. Ղալումյանը մարզի բնակչության թիվն ավելացրել, «հասցրել» 143 հազար 108-ի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Պատճառն ազգանունն է

Սուրբ Աննա եկեղեցու միջադեպի գործով երկվորյակ եղբայրների՝ Դավիթ եւ Միքայել Մինասյանների վարույթը քննած քննիչ Հակոբկոխյանը՝ հայտնի բռնցքամարտիկ Իսրայել Հակոբկոխյանի որդին, ապրիլի 3-ին ազատվեց աշխատանքից: Պատճառն այն է, որ Մինասյանների տան խուզարկությունից հետո լրագրողներին ասել էր, թե ոչինչ չեն հայտնաբերել: Դա ՔԿ-ն համարել է ոչ պրոֆեսիոնալ պահվածք ու ազատման դիմում պարտադրել: Իսրայել Հակոբկոխյանը, որն այս օրերին հացադուլ էր անում ԿԸՀ-ի շենքի մոտ, երեկ Ծառուկյանի հորդորով դադարեցրեց եւ անդրադառնալով որդուն աշխատանքից հեռացնելուն՝ ասաց, որ ի սկզբանե սեւեռված են եղել որդու դեմ. «Սկզբից ասել են՝ դիմում գրի գնա, չի արել... 2020-ին ասացին՝ պետք է գործուղվես Արցախ, համաձայնեց, հետո գործուղումը երկարացրին՝ տան վարձը, այլ ծախսերը թողնելով վրան, ասաց՝ հնարավոր չի այդպես: Դրանից հետո էլ պարբերաբար ասել են՝ դիմում գրի գնա»: Ըստ նրա՝ պատճառը որդու ազգանունն է, ինքն ընդդիմադիր է, որդին չի կարող ՔԿ-ում աշխատել: Նախկին քննիչն այժմ սովորում է, որ փաստաբանի լիցենզիա ստանա:

Անա ՊԱՊԻԿՅԱՆ

ՔՊԵՆՔ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՍԿՍԵԼ Է ԱԼԻԵՎԻ ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ. ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ԿՓՈԽԵՆ

ՔՊ-ի ձայները գողանալուց եւ խորհրդարանում 3/5 ձայներ ապահովելուց հետո էլ, ինչպես հայտնի է, «Քաղպայմանագիրը» չունի սահմանադրական մեծամասնություն եւ չի կարող այս թվակազմով հաջորդ խորհրդարանում սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու որոշում կայացնել: Բայց քանի որ Նիկոլ Փաշինյանը պարտավորություն է ստանձնել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի առջեւ՝ կատարել իր տնային առաջադրանքը, այն է՝ փոխել Սահմանադրությունը, մասնավորապես, նախաբանից հեռացնել Անկախության հռչակագիրը, ուստի, ընտրությունների թանաքը չչորացած, սկսել է առաջին քայլերը: Բանն այն է, որ իշխող թիմում մտադիր են 300 հազար քաղաքացիների ստորագրություն հավաքել եւ նախագիծը մեխանիկորեն դնել հանրաքվեի: Բնականաբար, դժվար թե 300 հազար մարդ ստորագրի Ալիեւի երազած Սահմանադրության համար, սակայն հաշվի առնելով, որ ԿԸՀ ղեկավարը Փաշինյանի կամակատար Վահագն Հովակիմյանն է, եւ նա է ստուգելու ստորագրությունների իսկությունը, ապա, ինչպես հունիսի 7-ի ընտրությունները նկարեց, այնպես էլ այս գործընթացը հորով-մորով կանի: Եվ քանի որ այդ արգելքը Փաշինյանը համարում է հաղթահարված, ուստի անցել է երկրորդ քայլին:

Իշխանական պատգամավորների ձեռամբ շրջանառության մեջ է դրել «Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծ, որպեսզի հանկարծ չտապալվի սահմանադրական հանրաքվեն:

Այսպես. ՔՊ-ականներ Ալխաս Ղազարյանը, Արուսյակ Զուլիակյանը, Վահագն Ալեքսանյանն ու Հասմիկ Հակոբյանը խորհրդարան են ներկայացրել օրենսդրական փաթեթ՝ Ընտրական օրենսգրքում եւ հանրաքվեի մասին օրենքում փոփոխությունների, առաջարկելով սահմանադրական հանրաքվեների ժամանակ ընտրության իրավունք տալ միայն հանրաքվեին նախորդած 48-րդ օրվա դրությամբ ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող քաղաքացիներին, ավելի ճիշտ՝ մեկ տարվա ընթացքում առնվազն 183 օր Հայաստանում փաստացի բնակվողներին:

«Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն հանրաքվեի օրը 18 տարին լրացած, հանրաքվեի օրվան նախորդող 48-րդ, իսկ նոր քվեարկության դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 365 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 եւ ավելի օր գտնվող ՀՀ քաղաքացիները, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով»,- նշված է ՔՊ-ականների առաջարկած փոփոխության տեքստում, որը պետք է ընդունվի խորհրդարանի կողմից: Ի դեպ, այս կարգավորումն են առաջարկում նաեւ խորհրդարանական ընտրությունների համար:

Իշխանականներն այս փոփոխության համար մի խուճուճ, բայց զավեշտալի հիմնավորում են մոգոնել. «Ներկայիս կարգավորումներով, ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու իրավունքի իրացման համար բացակայում է քաղաքացի-պետություն մշտական կապն արտացոլող որեւէ լուծում (ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների եւ տեղական հանրաքվեների): Պետության հետ քաղաքացու բավարար կապի (պարբերական կապի) տեսության հիմքում, ըստ էության, ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ քաղաքացիությունը չի կարող լինել միայն ֆորմալ իրավական կապ, այլ պետք է արտացոլի իրական սոցիալական, տնտեսական եւ կենսագործունեության կապ պետության հետ: Քաղաքացիությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ առկա է իրական կապ անձի եւ պետության միջեւ: Ընդ որում, քաղաքացին ստանում է տվյալ պետության կողմից երաշխավորված իրավունքների ամենամեծ ծավալը եւ իրավական պաշտպանության ամենաբարձր աստիճանը, որը տվյալ պետության հետ կայուն կապի բացակայության պայմաններում դառնում է կապի ֆորմալ եւ միակողմանի դրսեւորում: Այս իմաստով, քաղաքացիությունն անհրաժեշտ, բայց ոչ ամենեւին բացառիկ եւ ոչ միակ պայմանն է՝ ժողովրդաիշխանության իրացման հիմնական ձեւերին՝ ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու համար: Քաղաքացիությունը թեեւ քաղաքացի-պետություն կապի հիմնական իրավական դրսեւորումն է, սակայն ինքնին քաղաքացիության առկայությունը չի վկայում պետության հետ բավարար կապի առկայության մասին: Ըստ այդմ, քաղաքացիությունը կարող է կորցնել իր «որոշիչ դերակատարում» այդ հարցում, եթե անձը տեւական ժամանակ կտրված է պետության քաղաքական, սոցիալական, տնտեսական կյանքից: Այս համատեքստում, ընտրությունները պետք է արտացոլեն այն անձանց կամքը, որոնք իրապես գտնվում են այդ պետության որոշումների ազդեցության տիրույթում: Այս իմաստով, թեեւ քաղաքացիությունը ելակետային է ժողովրդաիշխանության իրացման համար, սակայն անհրաժեշտ է ապահովել նաեւ մասնակցային ժողովրդավարության բովանդակային կողմը, այսինքն՝ ընտրողի բավարար կապը պետության հետ: Ավելին, քաղաքացիությունը չի դրսեւորվում միայն որպես իրավական պատկանելություն: Մասնավորապես, քաղաքացիությունը ոչ թե սոսկ իրավական կապ է պետության հետ, այլ նաեւ՝ պատկանելություն եւ մասնակցություն այդ պետության քաղաքական կյանքին եւ իր շահերը շոշափող համապատասխան որոշումների կայացմանը»:

Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, այս փոփոխության նպատակն այն է, որ չտապալվի Ալիեւի գլխավոր առաջադրանքը: Բանն այն է, որ սահմանադրական հանրաքվեների պարագայում հատուկ շեմ է սահմանված՝ Սահմանադրության 207-րդ հոդված. «Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը»: Այսինքն՝ մոտ 650 հազար կողմ քվե է հարկավոր, որ հանրաքվեն անցած համարվի, եւ Սահմանադրությունն ընդունվի: Այս քայլով իշխանությունն իջեցնում է ընտրողների քանակն ու ըստ այդմ՝ ոչ թե 650 հազար կողմ է անհրաժեշտ լինելու, այլ՝ շատ ավելի պակաս: Ալիեւյան սահմանադրությունն անցկացնելու պարագայում ոչ միայն աշխարհի ծայրերից կարող էին գալ Հայաստան եւ «ոչ» ասել այդ սահմանադրությանը, այլեւ ուղղակի կարող էին բոյկոտել եւ տապալել դրա ընդունումը: Սահմանադրական հանրաքվեն միակ դեպքն է, երբ քվորումի խնդիր կա, եւ 650 հազար կողմ ձայն ստանալն էլ հեշտ գործ չէ: Իսկ սահմանադրական հանրաքվեն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեին մասնակցած քաղաքացիների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեի իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թվի մեկ քառորդը (25%): Այ, այս ընդհանուր թիվն են պակասեցնում այժմ:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Նիկոլ Փաշինյանը սրընթաց մտնում է բռնապետի կերպարի մեջ, եւ մարդիկ Հայաստանը ոչ թե ժողովրդավարության բաստիոն, այլ բանտիոն են անվանում: Նա արդեն քանիցս խոստանում է, որ 3 ընդդիմադիր առաջնորդները 10 տարի նստելու են, քանի որ «թավիշն ավարտվել է»: Գլխավոր դատախազը դիմել է ԿԸՀ՝ մի խումբ անձանց անձեռնմխելիությունից զրկելու պահանջով:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի նախկին տնօրեն **Արա Վարդանյանը** նկատում է. «Նիկոլ Փաշինյանն ընտրություններից հետո պետք է ժողովրդի ուշադրությունը շեղի իրական պրոցեսներից: Խոսքը վերաբերում է տնտեսական հարցերին, Ադրբեջանի պահանջներին եւ այլն: Ակնհայտ է, որ հենց Փաշինյանի ընտրազանգվածի հետ կապված՝ լրջագույն խնդիրներ են առաջանալու: Տնտեսապես առաջին հարվածը ստանալու են մարզերում՝ գյուղերում, արտահանման հետ կապված: Այս մարդը հիմա տեսարաններ է սարքում՝ կարծելով, որ կարող է կարեւոր հարցերը շրջանցել: Ես վստահ եմ, որ մարդկանց վրա այդ ամենը չի ազդելու: Խոսում են օրենսդրական փոփոխությունների մասին, ես կարծում եմ, որ այս քայլերը նրա համար են, որպեսզի Նիկոլ Փաշինյանը նոր արտահերթ ընտրությունների գնա՝ մինչեւ տարվա վերջ: Ուզում է ընդդիմադիր հիմնական ուժերին բանտարկել, որպեսզի ո՛չ Քոչարյանը, ո՛չ Կարապետյանը, ո՛չ էլ Ծառուկյանը չմասնակցեն ընտրություններին: Իզոլացնելու է այդ ուժերին, որ քիչ մասնակցություն արձանագրվի, եւ ինքը ստանա իր երազած 65-70 տոկոսը: Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները, միանշանակ, Նիկոլ Փաշինյանին ձեռնտու չեն: Ամբողջ աշխարհը տեսավ, որ նա այլեւս չի վայելում հայ ժողովրդի մեծամասնության վստահությունը: Այս ընտրությունները ցույց տվեցին, որ հայ ժողովրդի կեսից ավելին դեմ է այս մարդուն: Ակնհայտ է, որ նա չի կարողանալու իրականացնել սահմանադրական փոփոխություններ, իսկ դա Ադրբեջանի հիմնական պայմաններից մեկն է, կասկած չունեմ, որ տարածքային զիջումներ են լինելու՝ Տիգրանաշենի հետ կապված, գուցե նաեւ զիջումներ Սյունիքից, բայց, ԱԺ ընտրությունների արդյունքներից ելնելով, չեմ կարծում, որ նա այս փուլում կգնա այդ քայլին: Նա իր տերերին փորձում է ցույց տալ, որ իրավիճակն իր ձեռքում է, եւ ինքը նոր գործեր է բացում ընդդիմադիրների վրա, սակայն չեմ կարծում, որ ընդդիմությունը լռելու է՝ հանդուրժելով այդ ամենը: Վստահաբար, լինելու է պայքար, ընդդիմադիր զանգվածը դուրս է գալու փողոցային պայքարի, որին անպայման միանալու են նաեւ գյուղացիները, քանի որ նրանք արդեն իսկ իրենց մաշկի վրա զգում են Նիկոլի գործողությունների դառը հետեւանքները»:

Ինչ վերաբերում է «Զվարթնոց» օդանավակայանում գաղտնի նկարահանելուն, նա ասաց. «Մարդկանց նկարել՝ գաղտնի, եւ հրապարակել, դա խոսում է շատ ցածր մարդկային որակների մասին: Հիշեցնեմ, որ այդ արատավոր, զզվելի երեւույթի սկիզբը դրվեց մի քանի տարի առաջ, երբ Արթուր Վանեցյանի՝ ԱԱԾ ղեկավար լինելու ժամանակ հրապարակվեց գեներալ Մանվել Գրիգորյանի լուսանկարը՝ բանտախցից: Մեծ ափսոսանք եմ զգում, որ ԱԱԾ-ն ոչ միայն դարձել է Նիկոլ Փաշինյանի պաշտպանը, այլեւ՝ ծառայողը, նրա ապօրինի հրահանգները կատարողը: Նաեւ չմոռանանք Նիկոլի հայտարարությունները դատավորների մասին: Նա հայտարարել է, որ Գագիկ Ծառուկյանին անմեղ ճանաչած դատավորը դա արել է փողի դիմաց: Արդյո՞ք դրանից հետո քննություն է սկսվել այդ դատավորի գործունեության հետ կապված, կարծում եմ՝ ոչ: Մենք ապրում ենք մի իրականության մեջ, երբ երկրի վարչապետը ցանկացած բան կարող է հայտարարել, բայց դա չի ունենում որեւիցե հետեւանք, սակայն եթե ընդդիմադիր որեւէ ուժ ինչ-որ հայտարարություն անի, 5 րոպե չանցած՝ կհայտնվի բանտախցում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ո՞Վ Է ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ, ՈՐ ՆՄԱՆԱՏԻՊ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՍ ԳԱ

Ինչպես հայտնի է, ՔՊ-ն երկու աղմկահարույց օրինագիծ է նախապատրաստում, որոնք սահմանափակում են քաղաքացիների ընտրելու ու ընտրվելու իրավունքը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ս եկը մշակում է Հակակոռուպցիոն կոմիտեն: Հակակոռուպցիոն կոմիտեի տարածած հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը միջնորդությամբ դիմել է արդարադատության նախարարին՝ «նախաձեռնել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք հետայսու նվազագույնի կհասցնեն բացահայտված հանցավոր սխեմաների կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ այդպիսի սխեմաներում ներգրավված քաղաքական ուժերի մասնակցությունն ընտրական գործընթացներին արգելելու եղանակով»: Երկրորդ նախագծով, որի մասին հանրայինի եթերում խոսել է ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ՀՀ քաղաքացին պետք է վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն 6 ամիս բնակված լինի Հայաստանում, որպեսզի իրավունք ունենա մասնակցել ընտրություններին: Այս օրինագիծն արդեն շրջանառվում է:

Այս փոփոխությունների մասին զրուցեցինք ՀԱԿ վարչության անդամ, կուսակցության ցուցակով պատգամավորի թեկնածու, իրավաբան **Արմեն Խաչատրյանի** հետ: Նա երկար տարիներ համակարգել է ՀԱԿ-ի՝ ընտրական գործընթացին մասնակցելու իրավական եւ կազմակերպչական հարցեր, պարբերաբար հանդես է եկել որպես ԿԸՀ-ում իր կուսակցության ներկայացուցիչ, տարբեր ընտրությունների ժամանակ հետեւել է ընտրախախտումներին, ընտրական կեղծիքների եւ անօրինականությունների դեպքում ներկայացրել է ՀԱԿ-ի շահերը ՀՀ վարչական դատարանում՝ պահանջելով անվավեր ճանաչել կեղծված ընտրությունների արդյունքները, փորձագիտական աշխատանքի հարուստ փորձ ունի, այդ թվում՝ ԱԺ-ում: Նրան նախ խնդրեցինք համեմատել 2026 թվականի ԱԺ ընտրություններում կիրառված ազդեցության ձեւերն ընտրական միջավայրի վրա՝ նախկինում տեղ գտած նմանատիպ երեւույթների հետ:

- Եթե փորձեք Ձեր հարուստ փորձի տեսանկյունից համեմատություններ անել, ո՞րն է ներկայիս եւ նախկին ընտրակեղծարարության տարբերությունը:

- Ընտրական իրավունքի նման մասշտաբների բռնաբարում մենք չենք տեսել: Նախկինների ժամանակ մարդիկ թաքուն, աչքից հնարավորինս հեռու ընտրությունները կեղծում էին, ու երբ ասում էինք՝ ընտրությունները կեղծել եք, իրենք արդարանում էին, փորձում էին ապացուցել, որ չեն եղել ընտրակեղծիքներ, որ ընտրակաշառք չկա, սուտ եք խոսում եւ այլն: Ամեն դեպքում փորձում էին արդարանալ՝ մնալով արդարադատության սահմաններում: Հիմա առանց սեթեւեթանքների մարդիկ հայտարարում են՝ մենք ենք որոշելու ընտրությունների արդյունքները: Օրինակ, այդ ընտրատարածքների մասով, որտեղ անվավեր են ճանաչվել քվեարկության արդյունքները, ԿԸՀ-ի ձեւակերպումներն ուղղակի ֆանտաստիկայի ժանրից են: Էն, որ ասում են՝ տակտիկական քվեարկություն է լինելու, ու քանի որ մեզ համար արդեն պարզ է, թե ինչ է լինելու, դրա համար պետք է ընտրությունները չլինեն: Ոչինչ, որ 4-5 հազար մարդու ընտրական իրավունքը ոտնահարվում է:

- Հանրային քննարկման է դրված նախագիծ, որով ընտրություններից առաջ Հայաստանում 6 ամիս բնակված լինելու ցենզ են սահմանում՝ ընտրությանը մասնակցելու համար: Ինչպե՞ս եք սա գնահատում:

- Հենց սկզբից մեզ համար տարօրինակ էր, թե ոնց կարող են ընտրական իրավունքը սահմանափակել կամ ոտնահարել: Բայց մեկ էլ հաջորդ օրն իմանում ենք այս նախագծի մասին, որով իրենք կարող են որոշել, որ եթե 6 ամիս Հայաստանում չես եղել՝ օրինակ, ուսանող ես եղել կամ արտագնա աշխատանքի ես եղել, կամ պայմանագրային ինչ-որ հարաբերությունների մեջ ես եղել, կարող են որոշել, որ դու՝ վերջ, էլ չես կարող քվեարկել: Կատակ չեմ առում, բայց եթե այսպես շարունակվի, ՔՊ-ն կարող է որոշել, որ ընտրական իրավունքից օգտվում են միայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները կամ նա, ով Խաչի Ավետարանի վրա կերդվի, որ ՔՊ համակիր է, հակառակ դեպքում՝ ընտրություններին չի մասնակցի:

- Իրենք առարկում են, ասում են, որ եթե Հայաստանի կյանքին չի մասնակցում, չպետք է ընտրի: Ոմանք էլ, որոնք օրինագիծն ընդունում են, դեմ են միայն 6 ամիս ժամկետին:

- Դա ընդհանրապես աբսուրդ է: Հավասար ընտրական իրավունքի համար ազգերը, ժողովուրդները հեղափոխություններ են արել, արյուն է հոսել: Հավասար ընտրական իրավունքը մի տուփ սիգարետ չէ, որ կարող ես մի տեղից վերցնես, հետո ծխելու հավես չունենաս, դա շպրտես մի կողմ: Դա լրջագույն իրավունք է, որը սահմանափակելու համար ծանրակշիռ հիմքեր են պետք: Օրինակ, մարդու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով քաղաքացու ընտրական իրավունքն է սահմանափակվում: Եթե մարդը դատապարտված է ազատազրկման, նա զրկվում է ընտրական իրավունքից: Այսինքն՝ հիմքերը պետք է շատ հիմնավոր լինեն, որպեսզի իրավաչափ լինի այդ կարեւորագույն իրավունքի սահմանափակումը: Ընդ որում, դու նրան չես կարող զրկել, դու նրան կարող ես սահմանափակել:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են այս օրինագիծը բերել, Մոսկվայից եկած ընտրողներից վախեցան:

- Ավելի կտրուկ ասեմ՝ իրենց պարտությունն է պատճառը: Ընտրությունների արդյունքում այդ մարդիկ պարտվել են, որովհետեւ 49,5 տոկոսն ընդամենը եղել է վարչական ռեսուրսի, պետական միջոցների չարաշահման, վախի մթնոլորտի արդյունքում: Սրա հաշվին, ինչպես նաեւ վերջին պահին ԲՀԿ-ից գողացած 5 մանդատների հաշվին կարողացել են որոշակի մեծամասնություն ստանալ ԱԺ-ում ու դրա անունը դրել են հաղթանակ: Մի հատ էլ «ջախջախիչ հաղթանակ» էին ասում: Հասկանալի չէ, թե ում են ջախջախել:

- Երեւի, սեփական ժողովրդին:

- Այդպես է: Երբ իշխանությունը չի կարողանում Ալիեւին դիմակայել ու ջախջախվում է նրա կողմից, շուռ է գալիս, սկսում է սեփական ժողովրդին ջախջախել:

- Հակակոռուպցիոն կոմիտեն օրինագիծ է մշակում, որով ընտրակաշառք բաժանած կուսակցություններին արգելվելու է հաջորդ ընտրություններին մասնակցելը: Ենթադրենք, մի գրասենյակի աշխատող ինչ-որ փող է բաժանել, ո՞նց են սա իրավական առումով կապելու ողջ կուսակցության մասնակցության հետ՝ ընտրական գործընթացին:

- Մենք էլի խոսում ենք ընտրական իրավունքի սահմանափակման մասին: Ընտրական իրավունքի սահմանափակման նորմերը ձեւակերպված են թե՛ Սահմանադրությամբ, թե՛ Ընտրական օրենսգրքով, ու դրանից մի քիչ ավելի ինչ-որ բաներ հորինելը խոսում է տոտալիտար ռեժիմի հաստատման մասին:

- Հակակոռուպցիոն կոմիտեն է նման օրինագիծ մշակում, ի՞նչ կապ ունի այդ մարմինն Ընտրական օրենսգրքի հետ:

- Դե, դա ընդհանրապես աբսուրդ է, անթույլատրելի է: Գտնում եմ, որ պետք է անպայման հասարակական ընդվզում լինի այդ օրինագծերի դեմ, որովհետեւ այս պայմաններում հաջորդ ընտրություններն արդեն իսկ վերածվելու են պատգամավոր նշանակելու պրոցեսի: Ընդհանրապես, ո՞վ է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կամ արդարադատության նախարարը, որ նմանատիպ միջնորդություններով ու լուծումներով հանդես գա: Սա գալիս է մի տեղից, մեկ կենտրոնից, Նիկոլ Փաշինյանի ուղիղ հրահանգով, եւ իրենք են նմանատիպ որոշումներ կայացնողները:

ԿԱՆ ՆՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ՝ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն իրավապաշտպան **Վարդան Հարությունյանն** է:

- Հետընտրական զարգացումներին ի՞նչ գնահատական կտաք: Նիկոլ Փաշինյանն ընտրություններից առաջ սպառնում էր դատել ընդդիմադիր առաջնորդներին, անգամ նշեց, որ նրանք ենթարկվելու են տասը տարվա ազատազրկման: Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դիմել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որպեսզի անձեռնմխելիությունից զրկեն ընդդիմադիր մի քանի ուժերի ներկայացուցիչների, այդ թվում՝ Ռոբերտ Քոչարյանին, Դավիթ Ղազինյանին:

- Փաստորեն, մենք ունենք մի վարչապետ, որը մեկ սրվակում եւ վարչապետ է, եւ դատախազ, եւ դատավոր: Այս մարդն ինքն է որոշում՝ ում կալանավորել եւ ում որքան ժամկետով ազատազրկել: Սա է ողջ իրականությունը, բայց պատկերը շատ տխուր է. թե՛ նախընտրական փուլում եւ թե՛ հետընտրական փուլում գործողություններն ընթանում են սպառնալիքներով, հաշվեհարդարներով, իսկ հիմա Նիկոլ Փաշինյանը փորձում է ի կատար ածել այն բոլոր սպառնալիքները, որոնք հնչեցրել է ընտրություններից առաջ եւ բուն ընտրությունների ժամանակ:

- Ինչպիսի՞ մթնոլորտ է այժմ Հայաստանում: Նորանկախ պատմության ընթացքում հիշո՞ւմ եք նախադեպեր, երբ իշխանությունն այս աստիճան ատելության խոսք տարածեր, սպառնար, ահաբեկեր մարդկանց:

- Այժմ ատելության խոսքն աննախադեպ է: Այնպես չէ, որ սրանից առաջ Հայաստանում փայլուն ընտրություններ են եղել, կամ այնպես չէ, որ մենք ապրել ենք շատ լավ կամ գոհ ենք եղել մեր վիճակից: Բայց այսօր տեղի ունեցողը, ատելության խոսքի տարածումը՝ իշխանության կողմից, աննախադեպ է: Այս աստիճան ատելություն, ատելության խոսք երբեք չի եղել:

- Նիկոլ Փաշինյանը վիրավորում է կես միլիոնից ավելի քաղաքացու եւ պնդում է, որ նրանք՝ բոլորը, ընդդիմությանն ընտրել են փողի դիմաց: Այս երեւույթին ի՞նչ գնահատական կտաք: Փաստացի, Փաշինյանն անգամ չի հարգում քաղաքացու ընտրական իրավունքը:

- Անտրամաբանական հայտարարություններ են: Անգամ ամենազարգացած երկրներում լինում են ընդդիմադիրներ, անգամ աշխարհի լավագույն իշխանություններին ուղղված՝ հնչում են քննադատություններ: Մտածել, թե բոլորը պետք է իշխանամետ լինեն, սարսափելի է: Կան նման օրինակներ՝ Հյուսիսային Կորեա, Խորհրդային Միություն եւ այլն: Եթե մեր իշխանությունները ցանկանում են նման պատկեր ունենալ, ապա ես նրանց շնորհավորում եմ, իրենք 40 տարով հետ են գնում: Մենք ունեցել ենք նման երկիր, մերժել ենք այն, անկախացել ենք, որպեսզի ունենանք ընդդիմություն, ընդդիմության օգտին քվեարկողներ, քննադատներ, սակայն միեւնույն ժամանակ այդ ամենի համար չթիրախավորվեն: 1988-ի մեր գաղափարի հիմքում եղել է ազատությունը, այս մարդիկ այժմ ուզում են ժամանակի անիվը ետ պտտել: Եթե մարդիկ գնացել եւ ընտրել են ընդդիմադիր ուժերին, Փաշինյանի հայտարարությունները վիրավորում են այդ մարդկանց: Իհարկե, կա «ընտրակաշառք» հասկացությունը, կան նաեւ ընտրակաշառք տվողներ եւ վերցնողներ, բայց այդ ամենի կողքին կան նաեւ մարդիկ, ովքեր ընտրություն են կատարում առանց որեւէ նյութական շահի, մարդիկ ուղղակի օգտվում են իրենց ընտրության հնարավորությունից, եւ նման քաղաքացիները քիչ չեն, չի կարելի նրանց թիրախավորել, վիրավորել եւ հայտարարել, որ բոլորն անխտիր նույն սանդղակի վրա են: Դա անթույլատրելի է:

ԵՄ

ԴՈՒ ՔՈՆԸ ԱՐԱ, ՄԵՆՔ՝ ՄԵՐԸ, ՏՈՒԺՈՂԸ ՎԵՐՋՈՒՄ ԿԵՐԵՎԱ

Ընտրությունների, այսպես կոչված, պաշտոնական արդյունքները հրապարակելուց երկու օր հետո, այդպես էլ չստանալով ՌԴ նախագահից եւ վարչապետից շնորհավորանքի որեւէ խոսք, Նիկոլ Փաշինյանը խորհրդարանի ամբիոնից փաստացի պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Մինչեւ խորհրդարանական ընտրությունները, Փաշինյանն այլ ծրագիր ուներ. ինքը վարում է հակառուսական քաղաքականություն, բայց սողացող, քայլ առ քայլ, խոսքով Ռուսաստանի հետ բարեկամության եւ ջերմ հարաբերությունների կողմնակից է, գործնականում իրականացնում է հակառուսական քաղաքականություն, բայց զգույշ, հանգիստ, որ ցնցումներ չառաջանան, գոնե՝ շատ ուժեղ, բայց որ Հայաստանը դուրս բերի Ռուսաստանի տնտեսական եւ քաղաքական ազդեցությունից եւ մտցնի Թուրքիայի, Ադրբեջանի եւ Արեւմուտքի ազդեցության տակ: Նույնիսկ երբ ընտրություններից առաջ Ռուսաստանը սկսեց կոշտ քաղաքականություն իրականացնել Հայաստանի նկատմամբ, Փաշինյանը համոզված էր, որ ընտրություններից հետո ինքը կկարողանա լեզու գտնել, գործարքի գնալ՝ դուք հանդուրժում եք ինձ եւ իմ կողմից վարվող պրոարեւմտյան քաղաքականությունը, փոխարենը ես հանդուրժում եմ, որ Հայաստանում ընդդիմությունը լինի Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների կողմնակից, այսպես կոչված՝ պրոռուսական: Ընտրություններից հետո պարզ դարձավ, որ Ռուսաստանը մերժում է նման գործարքը, մերժում եւ արհամարհում է Փաշինյանին, ինչից վերջինս կատաղեց եւ հայտարարեց, որ այդ դեպքում ինքն էլ կոչնչացնի պրոռուսական ընդդիմությանը, Հայաստանի քաղաքական համակարգում այլեւս Ռուսաստանի հետ բարեկամության կողմնակիցներ չեն մնալու, կամ դրանք լինելու են լուսանցքում, բանտերում եւ կալանավայրերում: Ինչի սա կարող է հանգեցնել:

Մինչեւ խորհրդարանական ընտրությունները հանրային կոչվող, բայց իր անձնական շահերը սպասարկող հեռուստատեսությանը տված հարցազրույցում անդրադառնալով Ռուսաստանի հետ հարաբերություններին՝ Փաշինյանն ասել էր. «Մենք ռուսաստանցի մեր գործընկերներին ասում ենք՝ գիտեք, մենք չենք կռվելու ձեզ հետ, մենք չենք վիճելու ձեզ հետ, մենք ձեզ հետ այսպես՝ վիճաբանության, լեզվակռվի մեջ չենք մտնելու, որովհետեւ մենք գնահատում ենք այն հարաբերությունները, որն ունենք: Այո՛, միջպետական, բայց անձնական մակարդակը նույնպես պակաս կարեւոր չէ այս կոնտեքստում. ես շատ ուղիղ եւ ջերմ հարաբերություններ ունեմ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ եւ շատ ջերմ եւ ուղիղ հարաբերություններ ունեմ Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինի հետ»: Հիմա, երբ ընտրություններից անցել է գրեթե երկու շաբաթ, ո՞ւր են Փաշինյանի ռուս գործընկերներ Վլադիմիր Պուտինն ու Միխայիլ Միշուստինը, ինչո՞ւ նրան չեն շնորհավորում կամ՝ ինչո՞ւ են ցույց տալիս, որ իրենց համար Փաշինյանն ուղղակի գոյություն չունի, կարծես իրենք տեղյակ էլ չեն, որ Հայաստանում ընտրություններ են եղել:

Այդ վերաբերմունքի պատասխանը եղավ նախկին նախագահ, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ երկրից դուրս գալու ակնհայտորեն ապօրինի արգելքը, «Ուժեղ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակը գլխավորող Նարեկ Կարապետյանին առանց որեւէ իրական հիմքի երկրից բացակայելու արգելքը, իսկ ընդդիմության դեմ արշավանք սկսելու հայտարարությունը հնչեց խորհրդարանում, որտեղ 2025 թվականի բյուջեի կատարողականի իր ելույթում Փաշինյանը հայտարարեց. «Հայաստանում հաստատված քրեաօլիգարխիկ համակարգն արմատախիլ անելու պրոցեսներն ակնհայտորեն ուղեկցվել են ու պետք է ուղեկցվեին այդ թվում՝ արտաքին ազդեցություններով, դրանք նաեւ Հայաստանի անվտանգության համար կարող էին բերել որոշակի սպառնալիքներ, եղել են իրավիճակներ, երբ մենք հասել ենք մի գծի, որ հասկացել ենք՝ ազդեցության հետագա շարունակությունը կարող է բերել այնպիսի հակազդեցություններ, որոնք ընդհուպ գոյաբանական հետեւանքներ կարող են ունենալ Հայաստանի համար՝ անվտանգության սրված սպառնալիքների տեսքով»:

Փաշինյանն ասում է, որ ինքը նախկինում էլ է ցանկություն ունեցել ոչնչացնել Ռուսաստանի հետ տնտեսական եւ քաղաքական հարաբերությունները պահպանելու կողմնակից քաղաքական ուժերին, որոնց նա անվանում է քրեաօլիգարխիկ համակարգ, սակայն այն ժամանակ մտավախություն է ունեցել, որ այդ ուժերի դեմ ուղղված իր գործողությունները կարող են հանգեցնել Ռուսաստանի կողմից այնպիսի հակազդեցության, որը Հայաստանի համար կարող է ունենալ գոյաբանական հետեւանքներ, այսինքն՝ Ռուսաստանը կարող է ոչնչացնել Հայաստանը, բայց հիմա այդ վտանգը վերացել է, այդ վտանգը հաղթահարվել է, եւ այդ պատճառով ինքը կարող է ոչնչացնել իր քաղաքական հակառակորդներին:

Հարց է առաջանում. իսկ ի՞նչ է տեղի ունեցել այս ընթացքում, որ այդ սպառնալիքը վերացել է կամ, ինչպես Փաշինյանն է ասում՝ ինքը հաղթահարել է այդ սպառնալիքը, գուցե Ռուսաստա՞ն է վերացել, կամ Հայաստանն այնքան է ուժեղացել, որ Ռուսաստանի ուժն այլեւս չի՞ պատի ոչնչացնել: Իրականում, ոչ մի գոյաբանական սպառնալիք էլ չի եղել, որ մի հատ էլ հաղթահարվեր, ուղղակի Փաշինյանն ասում է, որ եթե Ռուսաստանը չի ցանկանում նկատել իր գոյությունը Հայաստանի իշխանության ղեկին, ինքն էլ կոչնչացնի այն ուժերին, որոնք հանդես են գալիս Հայաստանի եւ Ռուսաստանի բարեկամության եւ գործընկերության օգտին: Դրա համար էլ նույն ելույթում, որը ոչ մի կապ չուներ բյուջեի կատարողականի հետ, Փաշինյանը խորհրդարանական ընդդիմությանը հայտարարեց ապօրինի. «Խորհրդարանական այն ընդդիմությունը, որը ձեւավորվում է իններորդ գումարման ԱԺ-ում, կատարելապես ապօրինի գործունեության արդյունքում ձեւավորված քաղաքական միավոր է»: Իսկ քանի որ նա իր բնույթով ապօրինություն չհանդուրժող մեկն է, ապա կասկած չկա, որ անելու է ամեն ինչ՝ ապօրինությունը կանխելու, ապօրինի ընդդիմության մուտքը խորհրդարան թույլ չտալու: Թե ինչպես դա կանի, արդեն էական չէ, օրինակ, ԲՀԿ-ին մանդատներից զրկեց մի քանի տեղամասի արդյունքներ չեղյալ հայտարարելով, մի բան էլ կմտածի «Ուժեղ Հայաստանի» եւ «Հայաստան» դաշինքի մասով:

Ռուսաստանը որեւէ կերպ չի արձագանքում, կարծես ասելով՝ ինչ ուզում ես, արա, ում ուզում ես, կալանավորի, ումից որքան մանդատ ուզում ես, կարող ես խլել, դա քո ներքին գործն է: Մենք մեր անելիքն ենք անում, դու՝ քոնը, վերջում կտեսնենք, թե ով շահած դուրս կգա եւ ով՝ տուժող:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԴԱԺԵ՝ ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ

Ընդդիմությունը կդիմի Սահմանադրական դատարան՝ հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները չեղարկելու եւ նոր ընտրություններ նշանակելու պահանջով: Որոշել է արմատական ընդդիմության պահանջին միանալ նաեւ «Հանուն հանրապետության» կուսակցության ղեկավար Արման Բաբաջանյանը: Նա համարում է, որ հունիսի 7-ին Հայաստանում ոչ թե ԱԺ ընտրություններ, այլ խայտառակություն է տեղի ունեցել:

Դուք սխալ չկարդացիք՝ հենց Արման Բաբաջանյանը, նույն ինքը՝ «Հանուն հանրապետության» կուսակցության ղեկավարը, որ հունիսի 7-ի արարողության մասնակիցների մեջ թերեւս ամենախորացված ընդդիմադիր հայացքներով գործիչն էր: Ի՜նչ Նիկոլի սատելիտ, ի՜նչ Արեւմուտքի դրածո, ի՜նչ շպիոն, ի՜նչ բան… Այս ամենն ասեկոսեներ են: Հիմա, երբ նա արդեն հայտարարել է ՍԴ-ում ընտրությունների արդյունքները վիճարկելու իր ցանկության մասին, նրան պետք է համարել «ընդդիմադիր»՝ այստեղից բխող բոլոր հետեւանքներով:

Իսկ ինչո՞ւ Արման Բաբաջանյանը չմիացավ իրական ընդդիմության համատեղ բողոքին, այլ ՍԴ գնաց մենակ՝ բողոքարկելու ՀՀ իշխանությունների կազմակերպած վայ-ընտրությունները: Չար լեզուներն ասում են, որ սա Արեւմուտքի «Արման Բաբաջանյան» ծրագիրն է, որով փորձ է արվելու շփոթմունքի մեջ գցել ՍԴ-ին եւ կորզել մի որոշում, ըստ որի՝ ՀՀ իշխանություններն ու ընդդիմությունը հավասարապես կմեղադրվեն ընտրությունները տապալելու մեջ: Հասկացա՞ք, թե ինչ կարող է տեղի ունենալ… ՍԴ-ում ընդդիմությունն ընտրախախտումների մեջ կմեղադրի իշխանություններին, իսկ Արման Բաբաջանյանը, դրան զուգահեռ, կվիճարկի ընդդիմության արձանագրած արդյունքը եւ «փաստերով կապացուցի», որ ընդդիմության ձայներն ընտրակաշառքով բերված ձայներ են, եւ ընտրությունները պետք է չեղարկվեն: Ու կստացվի, որ Արման Բաբաջանյանը ոչ թե սովորական, այլ «ազնիվ» ընդդիմադիր է:

Մենք գիտենք, որ Արեւմուտքն ամեն այլանդակության պատրաստ է, որ ՀՀ բարձր դատարանի վճռի մեջ որեւէ հիշատակում չլինի իր «դիվերսիոն» գործողությունների մասին, որոնք հանգեցրել են աննախադեպ հնարքներով կեղծված ընտրությունների: Ե՞րբ, այդ ո՞ր ընտրություններից առաջ են ընդդիմադիրներին կալանավորել, ո՞ր ընտրությունների ժամանակ են ՀՀ ղեկավարները «կզըցնելու», «բոմժացնելու», «ԱԱԾ պադվալները լցնելու» սպառնալիքներ հնչեցրել ընդդիմության հասցեին, ե՞րբ է Արեւմուտքն այնքան փող տվել ՀՀ իշխանություններին, որ նրանք առատորեն ընտրակաշառք բաժանեն ու 700 հազարից ավելի քվե գնեն թշվառության մեջ ապրող ընտրողներից: Ընդդիմությունը, հասկանալի է, դատարանում կպնդի, որ այս երեւույթներն արտացոլվեն վճռի մեջ, բայց դատարանը կգնա՞ դրան: Ես մեծ հույս չունեմ, որ ՍԴ-ն կկանգնի արդարության կողքին: Դա ՍԴ-ից մեծ քաջություն պահանջող դիրքորոշում կլինի, մանավանդ որ Արման Բաբաջանյանն էլ զուգահեռ բզբզելու է Ռուսաստանի կողմից վարվող հիբրիդային պատերազմի թեման՝ իբր Ռուսաստանն այդկերպ ազդել է մեր ընտրությունների արդյունքների վրա եւ խաթարել պատկերը: Ուստի չենք կարող բացառել, որ ՍԴ-ն վճիռ կկայացնի ոչ այնքան ընտրությունների օրինականության, որքան Արեւմուտք-Ռուսաստան հակամարտության շուրջ: Արման Բաբաջանյանը, ըստ էության, դառնալու է Արեւմուտքի շահերի պաշտպանն այդ դատավարությունում: Հնարավոր է՝ նա դատարանի դահլիճ մտնի ԵՄ դրոշով եւ ռուսական կրկնակոշիկով (գալոշով), սկսի կծոտել դատավորներին՝ «կկզըցնեմ», միայն թե ՍԴ-ն ՀՀ արեւմտական իշխանությունների ցանկությանը հակառակ որոշում չկայացնի:

Մնաց պարզենք, թե մեր մյուս արեւմտամեռ «ընդդիմադիրներն» ինչու չեն միացել Արման Բաբաջանյանի՝ ՍԴ դիմելու որոշմանը: Արամ Սարգսյան, Լեւոն Շիրինյան… Ո՞ւր եք, արա, որ ելաք մարտի, Արման Բաբաջանյանին մենակ եք թողել, որ ի՞նչ: Արամ Զավենի՛ջ, մանավանդ դու, ո՞ւր ես, ինչո՞ւ տեր չես կանգնում քո 15 հազարանոց ընտրազանգվածին ու կուսակիցներիդ: Ասել էիր, չէ՞, որ մտնեմ խորհրդարան, Նիկոլի հետ կոալիցիա եմ կազմելու: Նիկոլը «քցեց» քեզ, չմտար խորհրդարան, դու բողոք-մողոք չունե՞ս: Գոնե արի եւ Արմանի նման բզբզա իրական ընդդիմության «բաժանած ընտրակաշառքների» ու ռուսական ազդեցության մասին: Մարդ ես, մեկ էլ տեսար՝ ՍԴ-ն հենց այդ հիմքով չեղարկի այս խայտառակությունը:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՏԱՎՈՒՇ

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ՝ ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՂԲՈՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախկինում գրել էինք, որ Տավուշի մարզի դատախազի տեղակալ Հ. Աղասարյանը Դիլիջանի ավագանուն առաջարկություն է արել՝ Դիլիջանում ապօրինի օտարված հողամասի մասին դատական հայց ներկայացնելու վերաբերյալ: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, առանց պետական լիազոր մարմնի դրական եզրակացությունը ստանալու, հաստատել է 2025 թ. սեպտեմբերի 6-ին կայացած հողամասի աճուրդի արդյունքները եւ ՀՀ սեփականություն հանդիսացող 1350.4 քմ հողամասը հանգստի նշանակության օբյեկտի կառուցման նպատակով 9 մլն 452 հազար 800 դրամով օտարել է Հայկ Ռոբերտի Ղազարյանին, կատարվել է վերջինիս սեփականության իրավունքի գրանցում:

Դատախազի տեղակալը համայնքի ավագանուն առաջարկել է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնել իրավասու դատարան եւ հարուցված հայցի մասին նույն օրը հայտնել Տավուշի մարզի դատախազություն, չհարուցելու դեպքում եւս տեղեկացնել Տավուշի դատախազություն: Հ. Աղասարյանն ավագանուն հայտնել է նաեւ, որ մեկամսյա ժամկետում հարուցված հայցի մասին տեղեկատվության բացակայության դեպքում դատախազությունն ինքը ձեռնամուխ կլինի հայց հարուցելու իր լիազորության իրացմանը:

Դիլիջանի ավագանու 2026թ. հունվարի 19-ի նիստում պետք է քննվեր Աղասարյանի առաջարկը, սակայն քվորում չլինելու պատճառով ավագանու նիստը չի կայացել: Դիլիջանի բնակիչներից տեղեկացել էինք, որ նշված հողամասը թեեւ գրանցված է ՆԳ նախկին նախարար Վահե Ղազարյանի եղբոր անունով, այն փաստացի Վահե Ղազարյանին է պատկանում: Այնտեղ՝ Դիլիջանի կոմպոզիտորների տուն տանող ճանապարհի մոտ կառուցվել է հանգստի գոտի, փայտե 6 քոթեջներ են գործարկվել: Մայիսի 11-ին գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին տեղեկատվական հարցում էի արել.

«1. Տավուշի մարզի դատախազի տեղակալ Հ. Աղասարյանը Դիլիջան համայնքի ավագանուն հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն է արել, որով հայտնել է Դիլիջանում Հայկ Ռոբերտի Ղազարյանին ապօրինի օտարված հողամասի մասին: Համայնքի ավագանու 2026թ. հունվարի 19-ի նիստում քվորում չի եղել, ավագանին այդ խնդրին վերաբերմունք չի ցուցաբերել: Ամիսներ են անցել, դատախազությունն այդ խնդրով, օրենքով սահմանված կարգով դիմե՞լ է դատարան, որպեսզի անօրինական կերպով օտարված պետական հողը վերադարձվի պետությանը: Եթե դիմել է, ե՞րբ, ո՞ր դատարանում է քննվում այդ հայցը:

2. Դիլիջան համայնքում Հայկ Ռոբերտի Ղազարյանին ապօրինի օտարված պետական հողամասի կապակցությամբ քրեական գործ հարուցվե՞լ է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի նկատմամբ: Եթե այո՝ ե՞րբ, ի՞նչ հոդվածով է հարուցվել, այդ գործով ի՞նչ կարգավիճակ ունի Դ. Սարգսյանը:

3. 2018 եւ 2025 թվականներին ՀՀ-ում քրեական հետապնդման ենթարկված քանի՞սն է եղել, դրանցից քանի՞սի նկատմամբ է դատարանների կողմից կալանք ընտրվել՝ որպես խափանման միջոց:

4. 2018 եւ 2025 թվականներին ՀՀ-ում քանի՞ հանցագործություն է արձանագրվել, դրանցից քանի՞սն է եղել ծանր եւ առանձնապես ծանր:

5. Իջեւանում Աղստեւ գետի հունի ավերման, այդ հունում Իջեւանի գինու-կոնյակի գործարանի կողմից ապօրինի մեծ պատ կառուցելու կապակցությամբ 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել: Այդ վարույթը քննվում է Հակակոռուպցիոն կոմիտեում: Գլխավոր դատախազությունն այդ վարույթով դատախազական հսկողություն իրականացնո՞ւմ է, չի՞ խախտվում վարույթը ողջամիտ ժամկետում քննելու պահանջը: Այդ քրեական վարույթով որեւէ անձի մեղադրանք առաջադրվե՞լ է»:

Հունիսի 16-ին Գլխավոր դատախազությունից ստացել եմ հետեւյալ պատասխանը.

«Ի պատասխան Ձեր՝ 2026 թվականի մայիսի 11-ի 11560282-2026 հարցմանը՝ տեղեկացնում եմ, Դիլիջանի համայնքապետարանի իրավասու պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական անփութություն կատարելու դեպքի առթիվ Տավուշի մարզի դատախազության կողմից դեռեւս 21.01.2026թ. ներկայացվել է առերեւույթ հանցագործության մասին հաղորդում, որի համար ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննությունը կատարվում է ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում: Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է»:

Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է «Պաշտոնեական անփութությանը» (Պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում, կամ առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, կամ այլ ծանր հետեւանք):

Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դ. Սարգսյանը չէր կարող Դիլիջանի ազգային պարկի տարածքում այն ժամանակ ՆԳ նախարար Վահե Ղազարյանի եղբորը պաշտոնեական անփութությամբ պետական սեփականություն հանդիսացող հողամաս օտարել: Գլխավոր դատախազությունը չի պատասխանել այն հարցերին, թե դատախազությունն այդ խնդրով օրենքով սահմանված կարգով դիմե՞լ է դատարան, որպեսզի անօրինական կերպով օտարված պետական հողը վերադարձվի պետությանը, եւ Դիլիջան համայնքի ղեկավարին մեղադրանք առաջադրվե՞լ է: Երեւի Գլխավոր դատախազությունը մայիսի 11-ից մինչեւ հունիսի 16-ը մտածել է, թե ինչպես պատասխանի այդ հարցերին: Իսկ տեղեկատվական հարցման մյուս 4 հարցերը պարզապես անտեսել է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓՆ ԻՆՉՊԵՍ Է ՄՏԱԴԻՐ ՄԻՋԱՄՏԵԼ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՐՑՈՒՄ



ԱՄՆ նախագահ Թրամփը հայտարարել է, որ իրանական հակամարտության կարգավորումից հետո վերստին կենտրոնանում է ուկրաինական հարցի վրա: Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ գործարքը թեեւ միջանկյալ է, սակայն, ամեն դեպքում, բացում է որոշակի հնարավորություններ՝ հաջողելու համար: Առնվազն հունիսի 19-ին, երբ երկու երկրների բարձր ներկայացուցիչները՝ ի դեմս ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի եւ Իրանի խորհրդարանի նախագահ Մոհամադ Բաղեր Ղալիբաֆի, կստորագրեն գործարքի համաձայնագիրը, կողմերը 60 լիարժեք օր կունենան՝ վերջնական համաձայնության հասնելու համար: Այդ երկամսյա ժամկետն էլ հնարավորություն է տալու Թրամփին՝ կենտրոնանալու միջազգային այլ խնդիրների վրա: Իսկ առաջնային պլանում «ուկրաինական քեյսն» է:

Սպիտակ տան ղեկավարն արդեն հայտարարել է, որ առավելագույն ջանքեր է գործադրելու՝ ուկրաինական հակամարտության կարգավորման համար: Ֆրանսիայում ընթացող Մեծ յոթնյակի գագաթնաժողովի ժամանակ էլ վերստին Ռուսաստանին կոչ է արել գործարք կնքել: Առաջին քայլն էլ կարծես կատարվել է: Թրամփը հանդիպել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հետ եւ այդ հանդիպումը համարել «լավը»: Ինչպես գրում է քաղաքագետ Քամրան Հասանովը Vestnik Kavkaza-ում, ողջ անցյալ տարին Թրամփը համառորեն ու անխոնջ աշխատում էր ուկրաինական կարգավորման ուղղությամբ: Նրա ջանքերի շնորհիվ տեղի ունեցան մի շարք հանդիպումներ ԱՄՆ եւ Ռուսաստանի միջեւ, այդ թվում՝ նաեւ Ալյասկայում՝ նախագահների մակարդակով: Անցյալ տարվա մայիս-հունիս ամիսներին Ստամբուլում տեղի ունեցավ Ռուսաստան-Ուկրաինա բանակցությունների երեք ռաունդ, որոնք հետո շարունակվեցին Աբու-Դաբիում: Բանակցությունները շարունակվում էին փոփոխական հաջողություններով: Ռուսաստանում բարձր էին գնահատում Պուտին-Թրամփ պայմանավորվածությունները, որոնք ձեռք էին բերվել Անքորիջում, դրանք անվանելով «Անքորիջյան ոգի»: Եվրոպացիները սկզբում դիրքավորվեցին որպես «վիրավորվածներ», որ իրենց դուրս էին դնում բանակցություններից, սակայն տարեվերջին Թրամփը սկսեց նրանց ձայնին ականջալուր լինել, նույնիսկ նրանց ցանկությունները հաշվի առավ իր նախնական պլանում, որը ներառում էր նաեւ Ուկրաինային տրամադրվելիք անվտանգային երաշխիքները:

Ռուսաստանում Եվրոպայի ակտիվացումը դիտարկվեց որպես ապակառուցողական էլեմենտ, որը վնասում էր «Անքորիջյան ոգուն»: Կիեւի եւ Մոսկվայի միջեւ հակամարտության ավարտի մասին ընկալումների անդունդը չփոքրացավ: Զելենսկին այդպես էլ հստակ պատասխան չտվեց Ռուսաստանի հսկողության տակ եղած տարածքների վերաբերյալ: Դոնեցկի Հանրապետության տարածքից զորքերի դուրսբերման հարցում նա պատրաստ չէր գնալ փոխզիջման: Փետրվարին Աբու-Դաբիում կայացած վերջին հանդիպմամբ՝ դիվանագիտական պրոցեսը կանգ առավ: Իրանի դեմ սկսված ամերիկա-իսրայելական ռազմարշավը մի կողմից Թրամփի ուշադրությունը շեղեց ուկրաինական կարգավորումից, մյուս կողմից՝ թույլ տվեց, որ հաստատված ընդմիջմամբ խաղաղության պրոցեսը վերագործարկման համար որոշակիորեն հասունանա: Պարզ է, որ Թրամփը շատ է ցանկանում վերագործարկել ուկրաինական կարգավորման բանակցությունները: Հատկապես որ անցած չորս ամիսներին պայմանները զգալիորեն փոխվել են: Ի հայտ են եկել նոր գործոններ, որոնք խանգարելու են դիվանագիտությանը: Ինչպես, օրինակ, Ռուսաստանի խորքերին հարվածելը դրոններով եւ զոհերի առկայությունը քաղաքացիական բնակչության շրջանում: Զելենսկին, իհարկե, նամակով հանդես եկավ՝ ուղղված Կրեմլին, եւ կոչ արեց սկսել խաղաղության բանակցություններ, սակայն Մոսկվայում այդ նամակը կասկածանքով ընդունեցին, հատկապես՝ վերջնագրային ոճի պատճառով:

Եվրոպայում էլ ավելանում է ընկալումը, որ անհրաժեշտ է ուղիղ շփում սկսել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Տեսականորեն ԱՄՆ ակտիվ ներգրավվածությունը կարող է խթանել դիվանագիտական քայլերը: Հատկապես որ Թրամփի՝ ուկրաինական թեմայի վրա կենտրոնանալու մասին հայտարարության օրը Ռուսաստան էր այցելել Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը: Վերջինս, ի դեպ, ակնարկել էր, որ Ստամբուլը պատրաստ է ընդունել ռուսական եւ ուկրաինական պատվիրակություններին: Այս իրավիճակում Սպիտան տան ներկայիս տերն ունի հնարավորություն՝ ուկրաինական բանակցային պրոցեսը վերականգնելու այն կետից, որտեղ ընդհատվել էր, երբ Մոսկվան ու Կիեւը Ստամբուլում փոխանակվել էին հուշագրերով: Հատկապես որ առջեւում Թրամփն ունի Կոնգրեսի միջանկյալ ընտրություններ, եւ արդեն զուտ ներամերիկյան քաղաքական կյանքի մակարդակում շատ կարեւոր է, որ արդյունքներ ցույց տա ամերիկացի ընտրողներին՝ նոյեմբերից հետո «կաղ բադիկի» դերում չհայտնվելու համար: Նրա համար շատ կարեւոր է ինչ-որ արդյունք ունենալը, որպեսզի այն կապիտալիզացնի եւ նախընտրական շրջանում որպես «հաջողություն»՝ վաճառի ամերիկացի ընտրողներին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՍԵԼՈՎ ՉԷ, ԹԵ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ՀՈ ՀԱԿԱԹՈՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՉԵ՞Ս ՍՏԵՂԾԵԼՈՒ

*Հարցազրույց արձակագիր, կրոնագետ **Դավիթ Սամվելյանի** հետ*

- Խորհրդարանական ընտրություններից մարդիկ ակնկալում են որոշակի փոփոխություններ, ի՞նչ փոխվեց կամ ի՞նչ կարող է փոխվել մեր կյանքում՝ այս ընտրությունների արդյունքում:

- Ես, ցավոք սրտի, Հայաստանում քաղաքական գործընթացներին այդքան էլ շատ կարեւորություն չեմ տալիս, որովհետեւ, եթե հասարակության հիմքում արժեհամակարգային ինչ-որ բաներ չփոխվեն, ոչ մի ընտրություն չի կարողանա փոխել այս երկրում որեւէ բան: Ինքնին կյանքը փոփոխությունների վրա է հենված, բայց այդ փոփոխությունները պիտի մի քայլ առաջ լինեն, ոչ թե ետ գնանք: Թե՛ որպես պետություն, թե՛ որպես անհատ, քո յուրաքանչյուր ընտրություն կյանքում պետք է առաջ տանի քեզ, ոչ թե ետ գնաս: Երբ ինչ-որ կետի ես հասած լինում, դրանից ետ այլեւս չես կարող գնալ, բայց դրա համար պետք է ունենաս ամուր հիմք: Իսկ ամուր հիմք պետության համար կարող է լինել քո պատմությունը, քո մշակույթը: Բայց, ցավոք սրտի, այսօր հասարակական տրամադրություններին մեջ եւ մշակույթը, եւ մշակույթ ստեղծող մարդիկ արդեն վաղուց չեն դարձել առաջնայնություն: Փողոցում ամենասովորական մարդու արած արտահայտությանը, որ եթեր են արձակում, կարող են ավելի մեծ կշիռ տալ, քան մշակույթի մարդու խոսքին, որը կարող է տարբեր ձեւերով արտահայտվել: Որովհետեւ մշակույթի մարդն առաջին հերթին իր գործով է խոսում, այսինքն՝ մի նկարը, մի գրական ստեղծագործությունը, մի երաժշտությունը կարող է իր բողաքի ձայնը լինել, կոչը լինել, եւ այսպես՝ հազար ու մի բան:

- Ի վերջո, այս ընտրություններն ի՞նչ արտահայտեցին, ինչպիսի՞ հասարակական ու քաղաքակրթական տրամադրությունների ականատես եղանք:

- Ինձ համար ընտրություններն արտահայտեցին այն, ինչը տարիներով կուտակվել էր, այսինքն՝ ես տեսա մարդկանց մեջ ահավոր բեւեռացում: Իշխանությունները գալու եւ գնալու են, բայց մարդիկ շարունակելու են իրար երեսի նայել, իրար հետ շփվել: Այն թշնամանքը, որ, հուսամ, շատերի մոտ ավարտվում է սոցիալական ցանցերում, շատ երկար ժամանակ է պետք լինելու, որպեսզի հաղթահարվի: Ցավոք, այսօր դրանից այն կողմ ոչինչ չեմ տեսնում: Ընտրության արդյունքները բերեցին նրան, որ մարդիկ եւս մեկ անգամ ինչ ասես՝ իրար ասացին, նաեւ արեցին՝ սկսած բարեկամության, հարազատության քանդումից մինչեւ ընկերության խզում: Դա ինձ համար աբսուրդ է: Ոչ մի իշխանություն ինձ չի կարող արժեհամակարգ թելադրել՝ ամենաբիրտ իշխանությունից սկսած մինչեւ ամենալիբերալ իշխանությունը: Որովհետեւ բանական մարդն ինքն է իր կյանքի, տարիների փորձի վրա իր արժեհամակարգը ձեւավորում: Ընկնել ինչ-որ տրամադրությունների տակ եւ իրար հետ այդպես վարվե՞լ: Իմ ու քո քաղաքական հայացքներն էլ կարող են տարբեր լինել, ես ու դու կարող ենք տարբեր քաղաքական կուսակցություն ընտրած լինել, բայց դա չպետք է մեզ խանգարի մեր հարաբերություններում, որովհետեւ դու էլ ես լավն ուզում, ես էլ եմ լավն ուզում: Ամենավատ բանը, որում մեկ անգամ եւս համոզվեցի, այն է, որ Հայաստանը դեռեւս գտնվում է քաղաքական մտքի այն շրջանում, երբ ինչքան էլ խորհրդարանական ընտրություններ անենք, միեւնույն է, մենք անհատների շուրջ ենք մտածում, մենք անհատի ենք ընտրում: Չենք նայում, թե այս կուսակցությունը գաղափարախոսություն ունի, չունի: Չէ՛, Պողոսն է, Պետրոսն է, չգիտեմ էլ ով է, որ էս մեկը գա, լավ կլինի, էն մեկը գա, վատ կլինի մեզ համար, բայց չի ասում՝ էս մեկի թիմը գա՝ լավ կլինի: Առաջին հերթին դա պետք է մեր մեջ հաղթահարենք, այդ քաղաքական, հասարակական միտքը պետք է ձեւավորվի: Չի կարելի միայն անհատին տեսնել, անհատը միշտ սխալական է, իսկ երբ դու կուսակցություն ես ասում, արդեն գաղափարախոսություն է, առաջ շարժվելու տեսլական է: Այս անգամ դա նույնպես պարտվեց, որովհետեւ մենք մեր պատկերացումների, երազանքների «հովանավոր» դիտարկում ենք անհատներին: Իսկ անհատները միշտ սխալվում են:

- Ինչո՞ւ է մեր հասարակությունն այս ճգնաժամի մեջ, բարոյական, քաղաքակրթական պակա՞սն է, նման հասարակությունը կարո՞ղ է լուրջ արժեհամակարգ ունենալ:

- Մարդկային հարաբերություններում մենք մեզ արժեհամակարգ, ինքնության հիմք քրիստոնեությունն ենք համարում, իսկ քրիստոնեության հիմքը սերն է: Բայց մեր շփումներում, իրար հետ գործողություններում ամենապակասող բանը սերն է: Մենք բառերով ասում ենք, իսկ գործով շատ քիչ մարդիկ են ապացուցում այն, ինչ ասում են: Մենք ավելի շատ մշակույթով եւ պատմականորեն քրիստոնյա ենք: Չենք կարող մերժել, որ մեր մշակույթը քրիստոնեական արժեհամակարգի վրա ստեղծված մշակույթ է, եւ դա մեր հարստությունն է, որը մեզ կարող է առավելություն տալ աշխարհի տարբեր ազգերի նկատմամբ, բայց ոչ՝ հպարտություն: Քանի որ մենք անգամ մեր երկրում, որ ոչ ոք չի խանգարում մեզ, երբ այսօր հնարավորություն ունենք ե՛ւ մեր քրիստոնեական արժեհամակարգն օգտագործելու իրար հետ հարաբերություններում ու հասարակական կյանքը կառուցելու մեջ, եւ ազատ մշակույթ ստեղծենք ու ընկալենք, բայց չենք անում եւ հետո ասում ենք՝ ինչու այսպես եղավ, ինչու այնպես եղավ: Այսինքն, մի քանի բան կա, որ կարող է նպաստել՝ սկսած հայրենիքը սիրելուց մինչեւ իրար սիրելը եւ հայրենաճանաչությունը, որ պետք է փոքր տարիքից մարդու սրտում դրվի, սրտում, ոչ թե մտքում: Իսկ մարդիկ քաղաքից դուրս են գնում կամ քեֆ անելու, կամ եկեղեցու մոտ սիրուն նկար ունենալու համար, ո՛չ շունչն են զգում կոթողի, ո՛չ պատմականությունը:

- Էլ ի՞նչ արժեք ու սրբություն մնաց, որ չպղծվեց եւ մոռացության չմատնվեց՝ այս վերջին տարիների ընթացքում, իսկ մենք կարծես հանդուրժում ենք ու պահպանում այս ընթացքը:

- Մոռացումը կամ ուրացումը չի փրկում եւ չի կարող ո՛չ մարդուն, ո՛չ հասարակություններին լավ տեղ հասցնել: Բաներ կան, որ ինչքան էլ փորձես խոսքով ջնջել, միեւնույն է, ազդեցություն չի ունենալու, չի մոռացվելու: Դու չես կարող ցեղասպանությունն ուրանալ, անհատից մինչեւ հասարակություն դժվար է լինելու, երբ դա այնքան եղած իրողություն է, որ անգամ ուրիշներն են ընդունել: Բաներ կան, որոնց ընդհանրապես չպետք է կպչել: Կան գիտական եւ կան քաղաքական շրջանակների քննարկում եւ հասարակության համար ընդունված նորմեր, երբ դրանց տեղերը խառնվում են, անհամաչափություն է առաջանում: Ես իմ պատուհանից ամբողջ կյանքում Արարատ եմ տեսել եւ գիտեմ, որ Արարատը 1921 թվականից Հայաստանի տարածքում չէ, բայց ոչ ոք չի կարող ջնջել իմ միջից այդ խորհրդանիշը: Ցեղասպանությունը չես կարող բառերով ժխտել: Թուրքիան մի 100 տարի է՝ ասում է՝ չենք արել, բայց քաղաքակիրթ աշխարհը գիտի, որ արել է: Որոշ քաղաքական նպատակահարմարությունից կամ չգիտեմ ինչից ելնելով՝ ինչ-որ մեկն ինչ-որ մի բան ասել է, բայց դրանից իրականությունը չի փոխվում: Հազար քամիներ են եկել ու գնացել: Խնդիրն այն է, թե սովորական մարդն ինչքանով համաձայն է կամ ինչքանով համաձայն չէ ինչ-որ խոսույթի: Կա պատմական ընթացք, որին դու պետք է տեր կանգնես, ոչ թե յուրաքանչյուր հասարակարգի կամ պետական միավորի ժամանակ ասես՝ չէ, սա հին է, պետք է քանդենք եւ մերը ստեղծենք, մերն ավելի ճիշտ է: Այսօրվա հասարակության մեծ մասի հայացքը հենց այդպիսին է:

- Իշխանություններն Արցախյան շարժման էջը փակված են համարում, հնարավո՞ր է մի ամբողջ ժողովրդի շուրջ 40 տարվա պատմական ընթացքը սխալ համարել:

- Այսօր մենք, որպես պետություն, ունակ չենք Արցախի հարցով որեւէ բան առաջ տանել եւ դրսեւորել հայանպաստ դիրքորոշում՝ սկսած հայերի վերադարձից: Մենք ո՛չ կարող ենք ապահովել, որ այդ մարդիկ գնան իրենց հողում, պատմական բնօրրանում ապրեն, մենք անգամ չենք կարողանում ապահովել, որ մեր պատմական ժառանգությունն Արցախում չավերեն: Բայց լռելը ճիշտ չէ, մշակութային արժեքների պահպանման համար միշտ պետք է խոսել, որ դիմացինն իմանա՝ դու տեր ես: Եթե անգամ չխոսես, բայց գոնե ինչ-որ գործողություն անես, այսինքն՝ լծակ կիրառես այդ ուղղությամբ: Մենք այս պահին ե՛ւ որպես պետություն, ե՛ւ որպես հասարակություն, ունակ չենք որեւիցե հարց Արցախի շուրջ առաջ տանելու: Իսկ եթե ես պետք է խոսեմ՝ ինձ ցույց տալու համար սոցիալական ցանցերում, եւ դա խոսքի մակարդակում մնա, ավելի լավ է ուրիշ բան անեմ, որն օգուտ կտա:

- ՔՊ-ի նախընտրական ծրագրում նշված էր կաթողիկոսին հեռացնելու մասին: Կաթողիկոսը վարչապետին ենթակա նախարա՞ր է, որ հեռացնի: Եկեղեցական օրենքներով ինչպե՞ս է նման խնդիրը կարգավորվում:

- Եկեղեցին մի ինստիտուտ է, որ ձեւավորվել է դարերի ընթացքում, որը ե՛ւ մշակութային, ե՛ւ հասարակական առումով, նաեւ շատ դեպքերում քաղաքականապես տիրություն է արել մեր ազգին: Փաստն այն է, որ մեզ՝ որպես ազգ, ներկայացրել է Եկեղեցին, կամ կաթողիկոսներն են ներկայացրել, եւ տարբեր իշխանություններ հաշվի են նստել մեր կաթողիկոսների հետ: Ամեն ինչից անկախ, Եկեղեցին ունի իր կանոնադրությունը. ասում են՝ «Կանոնագիրք Հայոց», որն սկսվում է առաքյալներից եւ հասնում մինչեւ «Դատաստանագրքի» ժամանակները: Այդ կանոնների մի մասն այժմեական չէ, բայց կա մի բան, որն ինձնից ու քեզնից կամ Պողոսից կախված չէ. Եկեղեցու ներքին կյանքը ղեկավարվում է ներքին օրենքներով: Թե՛ մեկին կարգալույծ կանեն, թե՛ մյուսին կձեռնադրեն, թե՛ ժողով կգումարեն կամ չեն գումարի, այդ բոլորը հոգեւորականների մակարդակով է արվում: Կաթողիկոսին ժողովուրդը չի ընտրել, ինքը քաղաքացիական օրենքներին չի ենթարկվում: Կաթողիկոսը ձեռնադրվում է 12 եպիսկոպոսների կողմից, իսկ հոգեւորականի օծումը ոչ մի մարդ, դատաստան չի կարող զրկել օծումից: Կաթողիկոսը, օծումից բացի, Գերագույն ազգային եկեղեցական ժողովի կողմից է ընտրվում: Երկու դեպքում կարող է կաթողիկոսն իր «գահից» հրաժարվել. մեկը՝ եթե ինքը դավանաբանական խախտում է անում՝ Եկեղեցու դավանանքից է շեղվում, մյուսը՝ երբ մահացու կամ անբուժելի հիվանդ է լինում եւ ունակ չի լինում այլեւս կառավարելու, այդ դեպքում աթոռակալ են նշանակում, բայց էլի կաթողիկոսը մնում է կաթողիկոս, որովհետեւ, բացի ընտրությունը, ձեռնադրություն ունի: Այնպես որ, ասելով չէ, թե հեռացնելու եմ կաթողիկոսին, հո հակաթոռ կաթողիկոսություն չե՞ս ստեղծելու:

- Որպես գրող՝ ի՞նչ ցանկությամբ, ի՞նչ խոսքով կավարտեք մեր զրույցը:

- Ես կցանկանայի, որ յուրաքանչյուր մարդ փորձեր առաջին հերթին ինքն իր ներսը նայել, ցավոտ հարցն առաջինն ինքն իրեն տար եւ առերեսվեր իր հետ, նաեւ՝ սպառողական, առօրեական, պատեհապաշտ մոտեցումներից մի քիչ վեր լիներ: Այդպես քո դիմադրողականությունն էլ է բարձրանում, կախվածություններ չես ունենում եւ ավելի պինդ ես լինում: Նաեւ խելամիտ լինես, ոչ թե ցույց տաս կամ երեւաս, այլ՝ լինես: Քո ազգի անցած ճանապարհը ոչ թե դրոշակ սարքես եւ հոխորտաս դրանով, այլ ապրես այն, ինչի մասին դու խոսում ես: Իմ պատկերացրած լավագույնը կլինի, եթե ես այնպիսի պետությունում ապրեմ, որ սովորելու բան ունենամ, որ ես ամաչեմ: Որովհետեւ, երբ հասարակության միջից ամոթը կորչում է, նշանակում է՝ այդտեղ արժեհամակարգ չկա: Պետք է ընկածին փորձես հանել, այդ սերը պետք է ունենաս, եթե սեր չունեցար, կողքիդ ընկածին չես հանի երբեք:

Հուսիկ Արա

ԿԵՂԾՎԱԾ ՁԱՅՆԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԵՎ ՈՉ ԼԵԳԻՏԻՄ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՊԵՏՔ ՉԷ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Հմ զրուցակիցը գրող, հրապարակախոս **Պատրիկ Արտեմին** է:

- Հունիսի 7-ի ընտրություններից հետո քաղաքական դաշտը կրկին մտել է լարված քննարկումների փուլ: Ինչպե՞ս եք գնահատում ընտրությունների արդյունքը:

- Մենք վաղուց ենք մտել մի փուլ, որտեղ քաղաքական գործընթացներն այլեւս չեն ընթանում միայն դասական տրամաբանությամբ: Սա երկար կուտակված-կայունացած վիճակ է՝ հասարակական հիասթափությունների, քաղաքական սխալների եւ կառավարման խոր ճգնաժամի խառնուրդ: Ես տարիներ շարունակ զգուշացնում էի, որ եթե պետությունը կորցնում է ներքին հավասարակշռությունը, ապա ընտրությունները դառնում են ոչ թե շրջադարձ, այլ արդեն ձեւավորված ընթացքի արձանագրում: Հունիսի 7-ն այդ ընթացքի շարունակությունն էր. ոչ թե շրջադարձ, այլ՝ հետեւանք: Ես սա վաղուց արդեն չեմ դիտում որպես մեկ ընտրության պատմություն: Սա ամբողջ համակարգի պատմությունն է: Երբ պետության ներսում տարիներով կուտակվում է անվստահություն, երբ ինստիտուտները դադարում են աշխատել հասկանալի տրամաբանությամբ, ընտրությունը դառնում է ոչ թե ընտրություն, այլ արդեն ձեւավորված եւ խեղված իրականության ամրագրում:

- Այս համատեքստում հաճախ քննարկվում է նաեւ ընդդիմության դերը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ընդդիմությունը չի կարողանում փոխել իրավիճակը:

- Որովհետեւ ընդդիմությունը դեռ չի դարձել մեկ միասնական քաղաքական կամք: Հայ հասարակությունը սպասում է ոչ թե բազմաձայն հայտարարությունների, այլ՝ հստակ կենտրոնի, հստակ պատասխանատվության եւ գործողության: Երբ այդ կենտրոնը չկա, նույնիսկ ճիշտ խոսքը կորցնում է իր ուժը: Ես չեմ ասում, որ ընդդիմությունը ոչինչ չի անում: Բայց քաղաքական պայքարում կարեւոր է ոչ միայն խոսել, այլ նաեւ կառուցել վստահություն, հետեւողականություն եւ կազմակերպվածություն:

- Դուք հաճախ խոսում եք պետության ներսից քայքայման մասին: Որտե՞ղ եք տեսնում այդ գործընթացի արմատը:

- Արմատը շատ ավելի խորն է, քան մարդիկ փորձում են պատկերացնել: Պետությունը քանդվում է այն պահին, երբ ներսում սկսում է փոխվել պատասխանատվության ընկալումը: Երբ պետական մտածողությունը փոխարինվում է իրավիճակային հաշվարկով, երբ ամեն քայլ արվում է ոչ թե պետության երկարաժամկետ շահի, այլ պահի շահի համար, համակարգը սկսում է դանդաղ կորցնել իր ողնաշարը: Սա աղմկոտ գործընթաց չէ: Սա լուռ քանդում ու քանդարարություն է:

- Հասարակության մեջ կա ընկալում՝ քաղաքական դաշտը փակուղում է: Համաձա՞յն եք:

- Փակուղի լինում է այնտեղ, որտեղ չկա շարժման կամք: Ես չեմ հավատում, որ փակուղին վերջնական վիճակ է: Բայց ես տեսնում եմ հոգնածություն՝ թե՛ հասարակության մեջ, թե՛ քաղաքական դաշտում: Երբ հասարակությունը երկար ժամանակ ապրում է անորոշության մեջ, սկսում է սովորել այդ անորոշությանը: Իսկ դա ամենավտանգավոր պահն է, երբ մարդիկ այլեւս չեն զարմանում:

- Եթե շեշտն ուղիղ դնենք, ի՞նչ պետք է անի ընդդիմությունը, որպեսզի իրական քաղաքական փոփոխություն լինի:

- Եթե ընդդիմությունը մտածում է, որ փոփոխությունը կարող է գալ ինքնաբերաբար, ապա սխալվում է: Փոփոխությունը կազմակերպվում է, կառուցվում է, պաշտպանվում է: Նախ՝ պետք է վերջ տալ հատվածական պայքարին: Բազմաձայնությունը քաղաքական ուժ չի ստեղծում, այն ստեղծում է աղմուկ: Երկրորդ. պետք է խոսել ժողովրդի հետ ոչ թե միայն ցավի լեզվով, այլ նաեւ «ճանապարհի» լեզվով: Եվ երրորդ. պետք է վերականգնվի վստահությունը՝ ո՛չ խոսքերով, այլ՝ հետեւողականությամբ:

- Ձեր խոսքում կա նաեւ հուզականություն: Ի՞նչն է Ձեզ ամենից շատ մտահոգում այսօր:

- Ինձ մտահոգում է պետության «հոգնածությունը»: Երբ պետությունը երկար ժամանակ ապրում է լարվածության, բաժանվածության եւ անվստահության մեջ, սկսում է հոգնել ոչ միայն իշխանությունը կամ ընդդիմությունը, այլեւ հենց հասարակությունը: Իսկ հոգնած հասարակությունը դառնում է խոցելի: Դա ամենավտանգավոր վիճակներից մեկն է՝ ցանկացած երկրի համար:

- Կա՞մ արդյոք պահ, որտեղ, ըստ Ձեզ, իրավիճակը դարձել է չափազանց վտանգավոր:

- Այդ իրավիճակի «տեսական» լինելու փուլն անցել է: Երբ պետությունը սկսում է չդիմադրել ներսից եկող քայքայմանը, նա աստիճանաբար սկսում է համաձայնել իր վիճակին: Եվ հենց այստեղ է վտանգը՝ ոչ թե հանկարծակի պայթյունի, այլ «սովորականացման» մեջ: Սովորում են կորստին, սովորում են լռությանը, սովորում են չհարցնել:

- Վերջին շրջանում քաղաքական իրականության մասին բավական կոշտ ձեւակերպումներ եք օգտագործում: Ինչի՞ց է գալիս այդ դիրքորոշումը:

- Ես գրող եմ, ոչ թե հաշվիչ մեքենա: Երբ երկիրը կանգնած է ծանր փորձության առաջ, լեզուն չի կարող մնալ չեզոք: Չեզոքությունը երբեմն դառնում է հեռացում իրականությունից: Ես չեմ գրում հաճելի լինելու համար: Ես գրում եմ, որովհետեւ չեմ ուզում, որ իրականությունը թաքցվի գեղեցիկ բառերի տակ:

- Ո՞րն է Ձեր ամենակոշտ ուղերձը քաղաքական ուժերին եւ հասարակությանը:

- Ես կասեմ առանց փափկեցնելու: Եթե ժողովուրդը չի դիմադրում երկրի քայքայմանը, ուրեմն համաձայնում է կործանման հետ: Եվ այդ պահից սկսած՝ քաղաքական պայքարն այլեւս միայն իշխանության մասին չէ: Այդ պայքարն արդեն գոյության մասին է: Իսկ գոյությունը չի պահվում հայտարարություններով: Այն պահվում է կամքով: Ժողովուրդը մակուլատուրա՞ է.ինչ ուզում՝ անում են՝ բակլան եփած են ցանում: Եթե դաշտերն ու տաշտերը դատարկ մնան, ժողովրդի կաշին են քերթելու: Այ քեզ ընտրությո՛ւն.մի հետեւանք: Ես սա վաղուց արդեն չեմ դիտում որպես մեկ ընտրության պատմություն: Սա ամբողջ համակարգի պատմությունն է: Երբ պետության ներսում տարիներով կուտակվում է անվստահություն, երբ ինստիտուտները դադարում են աշխատել հասկանալի տրամաբանությամբ, ընտրությունը դառնում է ոչ թե ընտրություն, այլ արդեն ձեւավորված եւ խեղված իրականության ամրագրում:

- Այս համատեքստում հաճախ քննարկվում է նաեւ ընդդիմության դերը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ընդդիմությունը չի կարողանում փոխել իրավիճակը:

- Որովհետեւ ընդդիմությունը դեռ չի դարձել մեկ միասնական քաղաքական կամք: Հայ հասարակությունը սպասում է ոչ թե բազմաձայն հայտարարությունների, այլ՝ հստակ կենտրոնի, հստակ պատասխանատվության եւ գործողության: Երբ այդ կենտրոնը չկա, նույնիսկ ճիշտ խոսքը կորցնում է իր ուժը: Ես չեմ ասում, որ ընդդիմությունը ոչինչ չի անում: Բայց քաղաքական պայքարում կարեւոր է ոչ միայն խոսել, այլ նաեւ կառուցել վստահություն, հետեւողականություն եւ կազմակերպվածություն:

- Դուք հաճախ խոսում եք պետության ներսից քայքայման մասին: Որտե՞ղ եք տեսնում այդ գործընթացի արմատը:

- Արմատը շատ ավելի խորն է, քան մարդիկ փորձում են պատկերացնել: Պետությունը քանդվում է այն պահին, երբ ներսում սկսում է փոխվել պատասխանատվության ընկալումը: Երբ պետական մտածողությունը փոխարինվում է իրավիճակային հաշվարկով, երբ ամեն քայլ արվում է ոչ թե պետության երկարաժամկետ շահի, այլ պահի շահի համար, համակարգը սկսում է դանդաղ կորցնել իր ողնաշարը: Սա աղմկոտ գործընթաց չէ: Սա լուռ քանդում ու քանդարարություն է:

- Հասարակության մեջ կա ընկալում՝ քաղաքական դաշտը փակուղում է: Համաձա՞յն եք:

- Փակուղի լինում է այնտեղ, որտեղ չկա շարժման կամք: Ես չեմ հավատում, որ փակուղին վերջնական վիճակ է: Բայց ես տեսնում եմ հոգնածություն՝ թե՛ հասարակության մեջ, թե՛ քաղաքական դաշտում: Երբ հասարակությունը երկար ժամանակ ապրում է անորոշության մեջ, սկսում է սովորել այդ անորոշությանը: Իսկ դա ամենավտանգավոր պահն է, երբ մարդիկ այլեւս չեն զարմանում:

- Եթե շեշտն ուղիղ դնենք, ի՞նչ պետք է անի ընդդիմությունը, որպեսզի իրական քաղաքական փոփոխություն լինի:

- Եթե ընդդիմությունը մտածում է, որ փոփոխությունը կարող է գալ ինքնաբերաբար, ապա սխալվում է: Փոփոխությունը կազմակերպվում է, կառուցվում է, պաշտպանվում է: Նախ՝ պետք է վերջ տալ հատվածական պայքարին: Բազմաձայնությունը քաղաքական ուժ չի ստեղծում, այն ստեղծում է աղմուկ: Երկրորդ. պետք է խոսել ժողովրդի հետ ոչ թե միայն ցավի լեզվով, այլ նաեւ «ճանապարհի» լեզվով: Եվ երրորդ. պետք է վերականգնվի վստահությունը՝ ո՛չ խոսքերով, այլ՝ հետեւողականությամբ:

- Ձեր խոսքում կա նաեւ հուզականություն: Ի՞նչն է Ձեզ ամենից շատ մտահոգում այսօր:

- Ինձ մտահոգում է պետության «հոգնածությունը»: Երբ պետությունը երկար ժամանակ ապրում է լարվածության, բաժանվածության եւ անվստահության մեջ, սկսում է հոգնել ոչ միայն իշխանությունը կամ ընդդիմությունը, այլեւ հենց հասարակությունը: Իսկ հոգնած հասարակությունը դառնում է խոցելի: Դա ամենավտանգավոր վիճակներից մեկն է՝ ցանկացած երկրի համար:

- Կա՞մ արդյոք պահ, որտեղ, ըստ Ձեզ, իրավիճակը դարձել է չափազանց վտանգավոր:

- Այդ իրավիճակի «տեսական» լինելու փուլն անցել է: Երբ պետությունը սկսում է չդիմադրել ներսից եկող քայքայմանը, նա աստիճանաբար սկսում է համաձայնել իր վիճակին: Եվ հենց այստեղ է վտանգը՝ ոչ թե հանկարծակի պայթյունի, այլ «սովորականացման» մեջ: Սովորում են կորստին, սովորում են լռությանը, սովորում են չհարցնել:

- Վերջին շրջանում քաղաքական իրականության մասին բավական կոշտ ձեւակերպումներ եք օգտագործում: Ինչի՞ց է գալիս այդ դիրքորոշումը:

- Ես գրող եմ, ոչ թե հաշվիչ մեքենա: Երբ երկիրը կանգնած է ծանր փորձության առաջ, լեզուն չի կարող մնալ չեզոք: Չեզոքությունը երբեմն դառնում է հեռացում իրականությունից: Ես չեմ գրում հաճելի լինելու համար: Ես գրում եմ, որովհետեւ չեմ ուզում, որ իրականությունը թաքցվի գեղեցիկ բառերի տակ:

- Ո՞րն է Ձեր ամենակոշտ ուղերձը քաղաքական ուժերին եւ հասարակությանը:

- Ես կասեմ առանց փափկեցնելու: Եթե ժողովուրդը չի դիմադրում երկրի քայքայմանը, ուրեմն համաձայնում է կործանման հետ: Եվ այդ պահից սկսած՝ քաղաքական պայքարն այլեւս միայն իշխանության մասին չէ: Այդ պայքարն արդեն գոյության մասին է: Իսկ գոյությունը չի պահվում հայտարարություններով: Այն պահվում է կամքով: Ժողովուրդը մակուլատուրա՞ է.ինչ ուզում՝ անում են՝ բակլան եփած են ցանում: Եթե դաշտերն ու տաշտերը դատարկ մնան, ժողովրդի կաշին են քերթելու: Այ քեզ ընտրությո՛ւն.մի

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 18.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄՈՒԼՏՖԻԼՄԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երեխայի զարգացման եւ դաստիարակության համար, ժամանակակից տեխնոլոգիաների ժամանակաշրջանում շատ կարեւոր է, թե ինչ է նա տեսնում էկրանին: Այս համատեքստում շատ կարեւոր են մուլտիպլիկացիոն կինոնկարները: Վաղ տարիքից արդեն երեխաներն ակտիվորեն առնչվում են անիմացիոն բովանդակության հետ: Այն դառնում է երեխաների համար ոչ միայն ժամանցի աղբյուր, այլ նաեւ՝ շրջակա աշխարհը ճանաչելու միջոց, ինֆորմացիայի աղբյուր: Սա հաշվի առնելով՝ կարեւոր է, որ երեխաներին, ըստ տարիքային խմբերի, ճիշտ բովանդակություն մատուցվի:

Մասնագետները նշում են, որ անիմացիոն ֆիլմերը՝ մուլտֆիլմերը, զգալի ազդեցություն են գործում երեխայի անհատականության անձնային ձեւավորման վրա, քանի որ մուլտհերոսների, սյուժեների, սյուժետային գծերի կամ սյուժետային մոդելների միջոցով երեխան յուրացնում է բարոյական նորմերը, սոցիալական դերերը, շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման մեխանիզմներն ու մեթոդները: Մանկավարժներն ու հոգեբանները հատկապես կարեւորում են բարոյական դաստիարակության ֆակտորը: Հատկապես նախադպրոցական տարիքում երեխաներն ակտիվորեն ընդօրինակում են իրենց սիրելի մուլտհերոսներին, որոնք նրանց մոտ էմոցիոնալ արձագանք եւ համակրանք են առաջացնում: Դրա համար էլ մուլտերը դառնում են նրանց համար վարքագծային որոշակի օրինակներ: Անիմացիոն կոնտենտի սյուժեի միջոցով երեխան ծանոթանում է բարոյական այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են՝ բարին, չարը, ազնվությունը, սուտը եւ կեղծիքը, ընկերությունն ու դավաճանությունը, փոխօգնությունն ու պատասխանատվությունը: Մուլտհերոսների արարքների եւ իրավիճակային զարգացումների միջոցով էլ երեխաները սկսում են գիտակցել պատճառահետեւանքային կապերը մարդկային վարքագծի եւ արարքի հետեւանքների միջեւ:

Մանկավարժները նշում են, որ ճիշտ ընտրված կոնտենտն օգնում է, որ երեխան ճիշտ ընկալի բարոյական նորմերը եւ զարգանա այդ նորմերին համահունչ վարքագիծ դրսեւորելով: Նաեւ՝ մուլտերն օգնում են, որպեսզի երեխաները կարողանան ծանոթանալ կյանքի տարբեր իրավիճակներին ու մոդելներին, փորձեն ինքնուրույն կողմնորոշվել անելիքների հարցում, ձեւավորվի համապատասխան էմոցիոնալ դաշտ: Մանկավարժներն ու հոգեբանները հորդորում են՝ երեխաներին հեռու պահել այնպիսի անիմացիոն կոնտենտից, որտեղ առկա են ասոցիալ վարքագծի դրսեւորումներ, ագրեսիա, բարոյական պատկերացումներն այլասերող կամ բացասական ազդեցություն ունեցող տեսարաններ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am